

Վ.ԲԲՅՈՒՍՈՎԻ «ՊՕՅՆԻԱ ԱՐՄԵՆԻԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

(Հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆ 2016

Ժողովածուն տպագրության է երաշխավորել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհուրդը:

*Ժողովածուի մեջ գետեղված հոդվածները տարբեր դիտակետերից ներկայացնում են, թե ինչպես է գնահատել Վ.Բրյուսովը հայ հին ու միջնադարյան քնարերգությունը: Օգտակար է բանասիրական ֆակուլտետների ուսանողների և հայ գրականության ուսուցիչների համար:*

**Հոդվածների ժողովածուն նվիրված է Վ.Բրյուսովի կազմած „Поэзия Армении” գրքի 100-ամյա հոբելյանին:**

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1916 թվականին Մոսկվայում ռուս նշանավոր բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Վալերի Բրյուսովի ջանքերով լույս տեսավ „Поэзия Армении” ժողովածուն, որը յուրօրինակ ահագանգ էր համայն մարդկությանը, թե ցեղասպանության է ենթարկվել մի հինավուրց ու շատ քաղաքակիրթ ժողովուրդ, որի քնարերգության առանձին նմուշներ մարդկային հանճարի դրսևորումներ են: Վալերի Բրյուսովը միանգամից դարձավ հայ ժողովրդի հավերժական բարեկամը, և նրա կատարածը հարստացրեց հայ գրականության գանձարանը:

Վալերի Բրյուսովի ժողովածուն երևան եկավ նրա հեղինակի բազմագիտական շնորհիվ. նա քաջատեղյակ էր համաշխարհային քնարերգությանը հնագույն ժամանակներից մինչև իր ապրած օրերը: „Поэзия Армении” գրքի առաջաբանից հստակ երևում է հեղինակի քաջատեղյակությունը արդեն հարուստ ավանդույթ ունեցող հայագիտության միջազգային դրսևորումներին: Հիացմունք է պատճառում նրա գիտելիքները հայ պատմիչների ռուսերեն թարգմանություններից: Նա կարդացել է Մովսես Խորենացու, Եղիշեի, Սեբեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու, Վարդան Մեծի պատմությունները, հետազոտել առաջնակարգ հայագետներ Մ.Էմինի, Ք.Պատկանյանի, Ն.Մառի, Ն.Ադոնցի, Հ.Օրբելու աշխատությունները, յուրացրել գերմանացի ու ֆրանսիացի հայագետներ Հ.Հյուբշմանի, Յո.Մարկվարտի, Սեն-Մարտենի, Էդ.Դյուլորիեի հայագիտական հիմնական հետազոտությունները, մեծապես օգտվել հանրագիտակ հետազոտող Արշակ Չոպանյանի ուսումնասիրություններից ու թարգմանություններից:

Ինչպես նկատել է Հովհաննես Թումանյանը, Վ.Բրյուսովին ամենից ավելի հիացմունք են պատճառել հայ միջնադարի բանաստեղծները, որոնց քերթվածների թարգմանությունը կատարել է անձամբ: Նախքան „Поэзия Армении” ժողովածուն հրատարակելը՝ Բրյուսովն այցելել է Անդրկովկաս, հայաշատ Թիֆլիսում և Բաքվում, ինչպես նաև բուն Հայաստանում՝ Երևանում ու Էջմիածնում, հանդես եկել հայ ժողովրդի պատմական անցյալին ու քնարերգությանը նվիրված փաստահարուստ գիտական զեկուցումներով:

Նա նաև բանաստեղծություններ է գրել հայկական թեմաներով՝ «Հայերին», «Հայաստանին», «Արարատին», «Արարատը Երևանից», «Տիգրան Մեծ» և ուրիշներ:

Հայ միջնադարյան քնարերգության ու բանահյուսության նմուշները գրքում զետեղված են բրյուսովյան թարգմանություններով: Հայ նոր գրականության արևելահայ ու արևմտահայ բանաստեղծներին Վ.Բրյուսովից բացի թարգմանել են այնպիսի առաջնակարգ բանաստեղծներ, ինչպիսիք են՝ Կ.Բայլմոնտը, Ա.Բլոկը, Վ.Խոդասևիչը, Վ.Իվանովը, Ի.Բունինը, Ֆ.Սոլոգուբը և այլք: Դեռ կենդանության օրոք երախտագետ հայ ժողովուրդը 1923-ին նրան շնորհել է Հայաստանի ժողովրդական բանաստեղծ պատվավոր կոչումը:

Վ.Բրյուսովը „Поэзия Армении” ժողովածուն պատրաստել է Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկով:

Ժողովածուի նկարչական ձևավորումն իրականացրել են հայ գեղանկարչության այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Վարդգես Սուրենյանցը և Մարտիրոս Մարյանը: „Поэзия Армении” գրքի երկու տիտղոսաթերթերը շատ մտածված ձևով ներկայացնում են հայ միջնադարի հարուստ մանրանկարչության գեղարվեստորեն կատարյալ ավանդույթը: Հիացած հայ միջնադարյան քնարերգության բովանդակությամբ ու ձևի կատարելությամբ՝ Բրյուսովն այն անվանում է հայկական ոգու իսկական հաղթանակ համընդհանուր մարդկության պատմության մեջ. „...средневековая армянская лирика есть истинное торжество армянского духа во всемирной истории”.

Վ.Բրյուսովի „Поэзия Армении” ժողովածուն և հայ հին ու միջնադարյան քնարերգությունը՝ հատորիկը նվիրված է Վ.Բրյուսովին ու նրա ստեղծած մեծարժեք գրքին:

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները տարբեր դիտակետերից գնահատում են „Поэзия Армении” գիրքը՝ այդ ձևով նշելով բացառիկ ժողովածուի 100-ամյա հոբելյանը և արտահայտելով իրենց երախտագիտությունը ռուս մեծ բանաստեղծի կատարածի նկատմամբ:

*Աելիտա Դոլուխանյան*  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

## ПРЕДИСЛОВИЕ

В 1916 г. в Москве усилиями известного русского поэта, литературного критика и переводчика Валерия Брюссова был издан сборник „Поэзия Армении”, который явился своеобразным предостережением всему человечеству о том, что подвергся геноциду очень древний и цивилизованный народ, отдельные образцы лирики которого являются проблесками человеческого гения. Валерий Брюссов сразу стал вечным другом армянского народа и созданный им труд обогатил сокровищницу армянской литературы.

Сборник Валерия Брюссова появился на свет благодаря огромной эрудиции его автора; он прекрасно знал всемирную поэзию с древнейших времен до своего времени. В предисловии книги „Поэзия Армении” четко прослеживается его посвященность в проявления международного арменоведения, уже тогда имеющего богатую традицию. Поражают его знания, почерпнутые из русских переводов трудов армянских историков. Он читал истории Мовсеса Хоренаци, Егише, Себеоса, Гевонда, Мовсеса Каланкатвази, Вардана Великого, он исследовал труды передовых арменоведов Н. Эмина, К. Патканяна, Н. Марра, Н. Адонца, О. Орбели, изучил основные арменоведческие исследования немецких и французских арменоведов Г. Хьюбшмана, Й. Маркварта, Сен-Мартена, Э. Дюлорье, много пользовался исследованиями и переводами энциклопедиста Аршака Чобаняна.

Как заметил Ованес Туманян, В. Брюссов был более всего восхищен средневековыми армянскими поэтами, стихи которых он переводил лично. До издания сборника „Поэзия Армении” Брюссов посетил Закавказье, густо населенные армянами Тифлис и Баку, а также Армению, побывал в Ереване и Эчмиадзине, прочитал богатые фактами научные доклады об историческом прошлом и поэзии армянского народа.

Он также автор стихотворений на армянские темы – „Армянам”, „Армении”, „Арарату”, „Арарат из Еревана”, „Тигран Великий” и другие.

Образцы средневековой поэзии и фольклора помещены в книгу в брюссовских переводах. Произведения современных восточно-армянских и западно-армянских поэтов переводили, кроме В. Брюссова, такие первоклассные поэты, как К. Бальмонт, А. Блок, В. Ходасевич, В. Иванов, И. Бунин, Ф. Сологуб, и другие. Еще при жизни Брюссова, в 1923 г. благодарный армянский народ пожаловал ему почетное звание Народного Поэта Армении.

Сборник „Поэзия Армении” В. Брюссова был подготовлен к изданию по предложению Армянского комитета Москвы.

Художественное оформление сборника было осуществлено такими гигантами армянской живописи, как Вардкес Суреньянц и Мартирос Сарьян. Оба титульных листа книги „Поэзия Армении” очень продуманно представляют великолепную художественную традицию армянской средневековой богатой миниатюры. Восхищенный совершенством содержания и формы армянской средневековой поэзии, Брюссов пишет: „...средневековая армянская лирика есть истинное торжество армянского духа во всемирной истории”.

Книга „Сборник „Поэзия Армении” В. Брюссова и армянская древняя и средневековая лирика” посвящена В. Брюссову и его ценному труду.

Преподаватели Кафедры Древней и средневековой армянской литературы и методики ее преподавания Армянского Государственного Педагогического Университета им. Х. Абовяна с разных точек зрения рассматривают и оценивают книгу „Поэзия Армении”, отмечая таким образом 100-летний юбилей исключительного сборника и выражая свою благодарность великому русскому поэту за проделанную им работу.

*Аэлита Долуханян*  
*Член-корреспондент НАН РА*



## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ ԵՎ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ (Գրական աղերսներ)

Վալերի Բրյուսով և Արշակ Զոպանյան գրական կապը հայ գրականության պատմության անմոռաց ու հուզումնալի էջերից մեկն է: Երկու բազմագիտակ գրողներ, բանասերներ, մտքի համաշխարհային գանձերին քաջատեղյակ մարդիկ, որոնք գործել և ապրել են տարբեր երկրներում, կապված են մի շատ կարևոր հանգույցով: Այդ հանգույցն է՝ համայն աշխարհը պետք է իմանա, թե 1915 թվականին ցեղասպանության ենթարկված Արևմտյան Հայաստանը և ողջ հայ ժողովուրդը պատմական ինչ առաքելություն է ունեցել համաշխարհային պատմության մեջ և ինչ հոգևոր գանձեր ունի:

1916 թվականին Մոսկվայում ռուսալեզու ընթերցողի համար Վալերի Բրյուսովի ջանքերով ու աշխատասիրությամբ հրատարակվում է „Поэзия Армении” ժողովածուն, որի լույս աշխարհ գալը երևույթ էր թե հայ և թե ռուս գրական կյանքում:

Որպես խորագիտակ բանաստեղծ ու գրականագետ՝ Վալերի Բրյուսովը խնամքով հավաքել է Հայաստանին վերաբերող պատմական և գրական նյութերը, թափանցել իրական արժեքի ու վավերականության մեջ, համեմատել համաշխարհային գրականության համաժամանակյա դրսևորումների հետ ու տվել իր մեկնաբանություններն ու գնահատականները:

Վալերի Բրյուսովը ժողովածուի ծանոթագրություններում բարեխղճորեն նշում է բոլոր այն աղբյուրները, որոնք օգտագործել է այդքան տարողունակ հատորը կազմելիս:<sup>1</sup> Նա նշում է, թե ձեռքի տակ են եղել հայ պատմիչների՝ Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու, Վարդան Արևելցու, Եղիշեի, Ստեփանոս Սյունեցու (Օրբելյանի) պատմությունների ռուսերեն թարգմանությունները, ծանոթ է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցին», Քերովբե Պատկանյանի „История монголов по армянским источникам” աշխատանքները:

<sup>1</sup> Տե՛ս „Поэзия Армении с древнейшей времен до наших дней, Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, Москва, 1987, с. 493-512. Այսուհետև տողատակում կնշենք միայն „Поэзия Армении”:

տությունը:<sup>2</sup> Օգտագործել է նշանավոր հայագետ ու հայասեր Նիկողայոս Մառի „Грамматика древнеармянского языка" գիրքը և նույն հեղինակի ուրիշ աշխատությունները: Հետագուտել է մեծ հայագետներ Նիկողայոս Ադոնցի և Հովսեփ Օրբելու ուսումնասիրությունները, հատկապես Ն.Ադոնցի „Армения в эпоху Юстиняна", „Марзпан Васак перед судом историков" պատմական գործերը, Ն.Մառի և Հ.Օրբելու Բագրատունիների Անի մայրաքաղաքին նվիրված գրքերը, կովկասյան հնագիտությանը վերաբերող փաստաթղթերը և այլն, և այլն:

Վ.Բրյուսովը մեծապես օգտվել է նաև եվրոպական հայագետներից՝ Հ.Հյուբշման, Ֆ.Տուրներիզ, Մարկվարտ, Սեն-Մարտեն, Էդ.Դյուլորիե և ուրիշներ: Ծանոթ է Սեն-Մարտենի՝ ֆրանսիական հայագիտության հիմնադրի գլուխգործոցի՝ «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկու հատորներին և Էդ.Դյուլորիեի խաչակիրների պատմությանը վերաբերող ծավալուն հատորին: Այս բոլոր աղբյուրների մեջ նա առանձնացնում է Արշակ Չոպանյանի կատարածը, որի հեղինակությամբ ֆրանսերենով նշում է հետևյալ գործերը՝

- 1) Chants populaires, Paris, 1896
- 2) Les Trouvères Arméniens, Paris, 1906<sup>3</sup>
- 3) L'Arménie, Paris, 1896
- 4) Zeitoun, Paris, 1896 և շատ ուրիշներ:

Վ.Բրյուսովը նշում է նաև, թե ինքը „Поэзия Армении" ժողովածուի առաջաբանում բազմիցս հղումներ ունի Արշակ Չոպանյանի գործերին:<sup>4</sup>

Արշակ Չոպանյանին Վ.Բրյուսովն անդրադարձել է նաև Արևմտահայաստանի բանաստեղծներին ներկայացնելիս: Նա Ա.Չոպանյանից թարգմանել է երկու բանաստեղծություն.

- 1) „Вот и снова Ничто превращается в Свет".
- 2) „Марина".

„Марина" քերթվածը Արշակ Չոպանյանի «Երկեր» հատորում ունի «Հյուսկենը» վերնագիրը.

### ՀՅՈՒՄՇԵՆԸ

Հանդարտ ծովուն վրա հպանցք մը հովի

Կթոթափե փափուկ մետաքսը ծավի,

Ձևացնելով անոր երեսն՝ աներեր,

Շաղապատված ու համաչափ կոր գիծեր:

Անծայրածիր նրբին հյուսկեն մը ճարտար,

Որուն կակուղ, կապուտագեղ ու պայծառ

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 512:

<sup>3</sup> „Поэзия Армении" գրքում Ա.Չոպանյանի կազմած „Les Trouvères Arméniens" գրքի տպագրության թիվը սխալմամբ նշված է **1905**:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 512:



Թափանցկության մեջեն աղոտ կ'երևա  
Շանաչությունը խոտերուն ընդծովա:<sup>5</sup>

### Марина

Над гладью моря вздохи ветерка  
Лазурный шелк сгибают непривычно,  
И, в складки ровные согнув слегка,  
Кладут запутанно, но симметрично.  
И кажется: прозрачное шитье  
Голубизной сияет углубленной,  
Но зелень трав подводных сквозь нее  
Просвечивает неопределенно.<sup>6</sup>

Միջնադարյան հայ քնարերգության ականավոր դեմքերին բնութագրելիս Վ.Բրյուսովը հաճախ դիմում է Արշակ Չոպանյանի կարծիքներին: XII դարի նշանավոր հոգևոր գործիչ, կաթողիկոս, մանկավարժ, գրող, գիտնական, երաժիշտ, առաջնակարգ գրիչ ու գրական մեծ նորարար Ներսես Շնորհալուց Բրյուսովը ներկայացնում է հինգ տարբեր բանաստեղծություններ և բավականին թվով հատվածներ «Ողբ Եղեսիոյ» քերթվածից: Թարգմանիչը լայն գիտելիքներ ունի հայ միջնադարյան մատենագրության այս վիթխարի անհատականության վերաբերյալ, որի որոշ գործեր անվանում է պոեմներ, իսկ «Ողբ Եղեսիոյ» քերթվածը „Элегия на взятие Эдессы“. Նա գրում է. «Ա.Չոպանյանն իրավացիորեն Ներսես Շնորհալուն անվանում է «եկեղեցու մեծագույն բանաստեղծներից մեկը և նրա հիմներին զուգահեռ է փնտրում XIX դարում՝ Վեռլենի մոտ՝ նրա „Sagesse“ («Իմաստություն»)»<sup>7</sup> գրքում: Վեռլենի «Իմաստության» մեջ կա կրոնական միաստիցիզմ, առկա են երազային ներշնչանքներ և խորին իմաստություն:

Պոլ Վեռլենը սիմվոլիստ բանաստեղծ էր և այդ առումով ստեղծագործական հոգեհարազատություն ուներ Վալերի Բրյուսովի հետ: Արշակ Չոպանյանի անցկացրած ստեղծագործական զուգահեռը XII դարի հայ բանաստեղծ Ներսես Շնորհալու հիմներգության և XIX դարի ֆրանսիացի բանաստեղծ Պոլ Վեռլենի «Իմաստության» գրքի միջև համոզիչ էր Վ.Բրյուսովի համար: Բերենք այդ նմանության մեր օրինակը.

### Պոլ Վեռլեն

<sup>5</sup> Արշակ Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 109:

<sup>6</sup> „Поэзия Армении“, с. 457-458.

<sup>7</sup> Պոլ Վեռլենի «Իմաստություն» գիրքը լույս է տեսել 1881 թվականի հոկտեմբերին: Գրքի բանաստեղծությունների մեծ մասը գրվել է 1875-79թթ. Անգլիայում, ուր տարբեր դպրոցներում ու քոլեջներում Վեռլենը դասավանդում էր ֆրանսերեն ու նկարչություն:

Վեռլենը „Sagesse“ գիրքը նվիրել է մորը՝ Էլիզա-Ստեֆանի Դեեին (1809-1886), որը մինչև կյանքի վերջը եղել է բանաստեղծի ամենանվիրյալ ընկերը:

Je ne vois plus rien,  
Je perds la mémoire  
Du mal et du bien...  
O la triste histoire!<sup>8</sup>

Ոչինչ չեմ տեսնում,  
Վատի ու լավի  
Հուշն եմ կորցրել...  
Տխր՝ ւր պատմություն  
(Թարգմանությունը մերն է՝ Ա. Դ.)

### Ներսես Շնորհալի

Գող եղէ մեղաց,  
Գտող կորստեան,  
Գուք ինձ փորեցի:  
    Ընտրեցի զչարն,  
    Ընկալայ կամաւ  
    Ըզիոյլս մեղաց:  
Ի բաց մեկնեցայ  
Ի սուրբ խորհրդոց,  
Ի բարեաց գործոց:<sup>9</sup>

Վ.Բրյուսովը նկատում է, թե չնայած «Ողբ Եղեսիոյ» երկը գրված է նույն ռիթմով, սակայն դա չի կաշկանդել բանաստեղծին, և նրա պատմելաձևը խիստ կենդանի է ու իրական: Ահա երկու գուգահեռ.

### Հատված «Ողբ Եղեսիոյ» քերթվածից

Արդ, գայս տեսեալ բռնաւորին  
    և կամակոր չար վիշապին,  
Սողայր և գայր նման օձին  
    և նենգաւոր թիւնաւորին՝  
Առ ի խայթել գարշապարին,  
    և հարկանել գաղտնի նետին,  
Այն որ դողեալ և թաքուցեալ,  
    ծածկեալ ունէր զնենգն ի սրտին.

---

<sup>8</sup> Paul Verlaine, Poésies, Moscou, 1977, p. 141.

<sup>9</sup> Ներսես Շնորհալի, Երգեր, Եղեսիայի ողբը, Առաջաբանով և թարգմանությամբ Լևոն Միրիջանյանի, Երևան, 1982, էջ 26, 28:

Եւ դարանեալ գայլն ի մայրին,  
ինձն թաքչէր յանապատին,  
Որում անուն իւր կոչէին  
Զանգի չարեաց գործունէին:<sup>10</sup>

### Նույն հատվածի Վ.Բրյուսովի թարգմանությունը

Тиран, судьбы свидетель злой  
Дракон сей, сходный со змей,  
Пополз, изгибистой дугой,  
Свирепый, ядом облитой,  
Чтобы в пяту меня стрелой  
Сразить, таимой за спиной.  
Он, под личиной тишины,  
Скрывал коварство за душой,  
Как волк, живущий под горой  
И в степь бегущий предо мной.  
Но имя ты его усвой:  
Занки, - всех гнусностей герой.<sup>11</sup>

Ֆրիկի քնարերգությունից Վ.Բրյուսովը թարգմանել է երկու բանք.

- 1) „Жалобы” (Отрывок)
- 1) «Գանգատ»
- 2) „Колесо судьбы”
- 2) «Ընդդէմ ֆալափին եւ վասն բախտի»

Վ.Բրյուսովը շեշտում է Ֆրիկի քնարերգության խրատական, ուսուցողական ու դաստիարակչական ուղղվածությունը, որն ամբողջապես հասցեագրված էր հենց իր ժամանակակիցներին: Ֆրիկը բանաստեղծություն է տեղափոխել իր տեսածն ու զգացածը և իր օրերի իրական պատկերն է ներկայացրել որպես սатира – խոցող, սուր մերկացում: Որպես նորարար՝ ազգային և սոցիալական խնդիրները քննելիս Ֆրիկը հեռացել է ավանդույթից և նախորդներից. „Но Фрик и в другом отношении порывает с традициями своих предшественников. „В то время как большинство древних армянских писателей, - говорит А.Чобанян, приписывало, следуя примеру библейских пророков, бедствия, постигавшие Армению, наказанию за их грехи, Фрик восстает против самого Господа Бога и жалуется на Его несправедливость по отношению к армянскому народу”<sup>12</sup>. Ա.Չոպանյանի այս եզրահանգումը այնքան պատշաճող է Ֆրիկի բողոքի ձայնին, որ

<sup>10</sup> Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ Մանիկ Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 54-55:

<sup>11</sup> „Поэзия Армении”, с. 172.

<sup>12</sup> „Поэзия Армении”, с. 49.

լիովին ընդունելի է Վ.Բրյուսովի համար: Հավանաբար այդ ի նկատի ունենալով՝ Մանուկ Աբեղյանը հենց նույն հատվածը մեջբերում է „Поэзия Армении” գրքից ու իրավացիորեն առարկում. «Միսլ է ասել, թե Ֆրիկը Հայոց աշխարհին հասած դժբախտությունները հետևանք չի համարում մեղքերի, և իբր նա «այդ կողմից խզում է այն կապը, որ ունի իր նախորդների հետ»: Արդարև, նա «Գանգատի» մեջ առանձնապես չի բերում մեղքը, որովհետև նրա խնդիրն է ազգային և դասակարգային անարդար և անիրավ վիճակների դեմ բողոքելը, բայց այստեղ էլ վերջը նա ոչ միայն համակերպում է աստծու կամքին, այլև կողմնակի հայտնում է մեղքի մասին՝ ասելով աստծուն, որ եթե «քո սրտիդ կամք ատելի, որ չարարաք ըստ հրամանի, նա՛ դու ջնջել գմեզ»: Աստծու հրամանի համեմատ չգործելը հենց՝ է մեղքը, որի համար և պատժում է աստված»:<sup>13</sup>

Ինչպես վկայում է Վ.Բրյուսովն իր թարգմանությունների ու ծանոթագրությունների համար օգտագործած աղբյուրներից մեկը եղել է Ա.Չոպանյանի կազմած „Les Trouvères Arméniens” («Հայ աշուղները») ժողովածուն, որում զետեղված են հայ միջնադարի հայ բանաստեղծների այն գործերը, որոնց մի մասը թարգմանաբար կան „Поэзия Армении” ժողովածուի մեջ: Հերթականությունը Ա.Չոպանյանի ժողովածուում հետևյալն է՝ Նահապետ Քուչակ, Հովհաննես Պլուզ, Կոստանդին Երզնկացի, Ֆրիկ, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, Հովհաննես, Հովհաննես Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Երեմիա Քյոմուրճյան, Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Ղունկիանոս, Ջիվանի:<sup>14</sup>

Սկսած V-VII դարերի շարականներից ու Գրիգոր Նարեկացուց՝ Վ.Բրյուսովի „Поэзия Армении” մեջ միջնադարյան հայ քնարերգության բնագրերն ունեն հետևյալ ընդհանուր խորագիրը՝ „Поэзия средневековья и песни ашугов”<sup>15</sup>.

XIII դարի վերջի և XIV դարասկզբի բանաստեղծ հոգևորական Կոստանդին Երզնկացին Վ.Բրյուսովի կարծիքով միջնադարյան հայ բանաստեղծների մեջ ունի ամենապատվավոր տեղը: Նա հրաժարվել է դասական գրաբարից և ժամանակակիցներին դիմել է նրանց հասկանալի լեզվով: Բրյուսովը գիտի, որ Կոստանդին Երզնկացին առաջին իսկական սիրո երգիչն է հայ միջնադարյան քնարերգության մեջ: Նրան հավանաբար հայտնի է հոգևորական սիրերգակի ինքնապաշտպանական խոստովանությունը.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,  
Աշխարհի բան ուզեն զըրով,  
Նա ես վասն այն յայտնի ձայնով.  
Սիրու բաներս ասցի յոլով:<sup>16</sup>

Բրյուսովը թարգմանել է միայն Կոստանդին Երզնկացու գարնանը նվիրված այլաբանական քերթվածը, որի վերնագրում ընթերցողին հատուկ զգուշացում կա՝ «Բան գարնան

<sup>13</sup> Մ.Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 321:

<sup>14</sup> Տե՛ս Les Trouvères Arméniens, p. 21-291.

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 153-266:

<sup>16</sup> Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա.Սրապյանի, Երևան, 1962, էջ 165:

օրինակաւ խորհուրդ ի Քրիստոս. մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգևոր»<sup>17</sup>: Սա այն բանաստեղծությունն է, որն ամբողջովին ներծծված է Մեծ Վերածննդի ոգով: Վերածնունդն արվեստի և գրականության մեջ սկիզբ առավ XIV դարի Իտալիայի քաղաքներում: Վերածննդի ներկայացուցիչները կրոնականը ներկայացնում էին աշխարհիկ կյանքի իրական, տեսանելի, գեղագիտական հաճույք պատճառող պատկերներով:

Կոստանդին Երզնկացին ապրում էր մի քաղաքում, որն իր ժամանակի համեմատ քաղաքակիրթ էր: Ահա թե ինչ է գրում Կոստանդին Երզնկացու ապրած օրերի Երզնկայի մասին վենետիկցի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որը կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները (buckram): Նա ունի որևէ վայր գոյություն ունեցող բնական աղբյուրներից լավագույն բաղնիքները: Երկրի ժողովուրդը հայեր են, որոնք հպատակվում են թաթարին: Բազմաթիվ քաղաքներ և գյուղեր կան երկրի մեջ, բայց նրանց քաղաքներից ամենն ընտիրը Արզինգան է, որ արքեպիսկոպոսական թեմ է»<sup>18</sup>:

Պարզ է, որ նման շքեղ քաղաքում, ուր կար զարգացած քաղաքային կյանք, ուր գործվում էին ընտիր բեհեզներ, ուր բնությունը շոայլորեն զարդարում էր քաղաքն այգիներով ու պարտեզներով, պետք է ծնվեին կնոջը, սերը, կյանքի գեղեցկությունները փառաբանող երգեր: Այդ է նաև այն հիմքը, որը Վ.Բրյուսովի ձևակերպմամբ, մեծ պատիվ է բերում հայ գրականությանն ընդհանրապես. «Լեզվի և հորինվածքի ուժգնությամբ ու թափով պոեմը պատիվ կբերեր այն ժամանակվա Արևմտյան Եվրոպայի ամեն մի գրականության, և Եվրոպան նույնիսկ ոչինչ չուներ նրան հակադրելու: Իսկ իր մեջ թափանցած ոգով և իր բոլոր մասերով պոեմը պատկանում է վերածննդի մեծ հոսանքին...»<sup>19</sup>:

Կոստանդին Երզնկացուն գնահատելիս Վ.Բրյուսովը վերստին համաձայն է Ա.Չոպանյանի այն տեսակետին, թե Երզնկացու բանաստեղծությունը աստվածաբանի, գիտնականի սառը դատողություն չէ, այլ զարնան թարմությամբ ոգևորված կենսասերի հրճվանք:

Վ.Բրյուսովը հիմնավորված կրկնում է նաև Ա.Չոպանյանի՝ Նահապետ Քուչակի հայրեններին տրված գնահատականները: Չոպանյանը զուգահեռներ է անցկացնում Քուչակի և պարսից բանաստեղծներ Սաադիի, Հաֆիզի, Օմար Խայամի քերթվածների միջև: Այդ զուգահեռները նա տեսնում է նաև Պոլ Վեռլենի և Հենրիխ Հայնեի գրվածքներում: Փաստորեն տարբեր դարերը, տարբեր քաղաքակրթությունները մեկտեղվում են քուչակյան հայրեններում. «Ա.Չոպանյանը նախընտրում է Նահապետ Քուչակին համեմատել XIX դարի բանաստեղծների՝ Հայնեի և Վեռլենի հետ, և դա արդարացի է» («А.Чобанян предпочитает сравнивать Наапета Кучака с поэтами XIX века, с Гейне и Верленом, и это справедливо»)<sup>20</sup>.

Ամենից շատ Վ.Բրյուսովը հիացած է Սայաթ-Նովայի խաղերով ու նրան համարում է հանճար, կոչում աշխարհի մեծ բանաստեղծներից մեկը: Սայաթ-Նովայի կյանքի և նրա ստեղծագործության բնութագրմանը „Поэзия Армении” ժողովածուում հատկացված է

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>18</sup> Մարկո Պոլո, Ուղեգրություն Մարկո Պոլոյի (1271-1295), Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Երևան, 1932, էջ 48:

<sup>19</sup> „Поэзия Армении”, с. 50. Տե՛ս նաև Կոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 35:

<sup>20</sup> „Поэзия Армении”, с. 57.

ամենաձավալուն մասը: Խաղերն էլ ավելի մեծ թվով են ներկայացված բնագրային հատվածում, քան մյուս բանաստեղծներինը:

Բացի մի քանի գնահատականներից, որոնք լիովին Վ.Բրյուսովի եզրահանգումներն են „Поэзия Армении” գրքում, Սայաթ-Նովային նվիրված բաժինը ժողովածուի հեղինակը գրեթե նույնությամբ թարգմանել է Ա.Չոպանյանի կազմած „Les Trouvères Arméniens” գրքից:<sup>21</sup> Սա շատ բնական է, որովհետև ռուս բանաստեղծը վստահում էր Ա.Չոպանյանի հաղորդածին: Ահա համեմատական երկու հատված. „В 1795 году Ага-Махмут-хан персидский обложил Тифлис и населению угрожала жестокая резня. Узнав об этом, престарелый ашуг, ...покинул свой уединенный монастырь и поспешил в столицу, чтобы спасти свою семью. Ему удалось удалить из города своих детей в Моздок, где они были в безопасности. Но сам Саят-Нова или не успел уехать или не захотел покинуть своих сограждан в беде. Как бы то ни было, Саят-Нова был в Тифлисе в тот день, когда город был взят персидским полчищем. Поэт – епископ, вместе с толпой народа, молился на коленях в соборе. Персы потребовали, чтобы все вышли из церкви и приняли ислам. Саят-Нова отвечал одним стихом по татарски:

Из храма нет! не выйду я, не отрекусь я от Христа!”<sup>22</sup>

„En 1795, la nouvelle lui arriva qu’Agha Mahmoud Khan, le despote persan, avait assiégé Tiflis et que la population était en danger d’être massacrée; il se hâta de se rendre dans sa ville natale, dépêcha ses enfants à Mozdok où ils seraient en sûreté, mais lui-même ne put se sauver à temps, ou peut-être dédaigna-t-il de fuir la mort; les Persans, ayant pénétré dans la ville, le trouvèrent priant dans la cathédrale arménienne de la Grande Forteresse; ils le sommèrent de sortir de l’église et d’embrasser l’islamisme; le poète leur répondit par un vers (on turc), le dernier qu’il ait fait:

Je ne sortirai pas de l’église, je ne me détournerai pas de Jésus”.<sup>23</sup>

Վ.Բրյուսովի և Ա.Չոպանյանի գրական հոգեհարազատությունը երևում է այն երեք նամակներում, որոնք վերջինս ուղարկել է ռուս բանաստեղծին:

Արշակ Չոպանյանը մշտապես տեսադաշտում էր պահում հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, մշակութային ու գրական կյանքը: Նա այդ անում էր հայ կյանքի վրա իր բարերար ներգործությունը ունենալու անասելի մղումով: Առանց չափազանցության նա չունեի սեփական կյանքը, որովհետև նրա կյանքը հանուր հայության հոգսերով ապրելն էր: Բնական է, թե ինչ արժեք պիտի ունենար Չոպանյանի համար այն ամենը, ինչ անում էր Վալերի Բրյուսովը՝ աշխարհին ներկայացնելով իր հիացական կարծիքը հայ քնարերգության վերաբերյալ:

Վ.Բրյուսովին ուղղված առաջին նամակը գրված է 1916թ. մարտի 16-ին: Պարզվում է, որ ռուս գրողը Փարիզ՝ Արշակ Չոպանյանին հեռագիր է ուղարկել Սորբոնի համալսարանում կազմակերպված հայ ժողովրդին նվիրված հանդեսը ողջունելու Մոսկվայի գրական շրջանակների անունից: Հայտնի է, որ Բրյուսովը քաջ տիրապետում էր ֆրանսերենին, և այս իրողությունն առավել սերտացնում էր երկու գրողների կապը: Սորբոնի ապրիլի 9-ի երեկոն նվիրված է եղել հայերի ցեղասպանությանը: Երեկոն գլխավորել է Ֆրանսիայի ազգային ժողովի նախագահ Պոլ Տեշանելը, ելույթ են ունեցել Ֆրանսիայի կրթության նախարար Պենլըվեն,

<sup>21</sup> „Les Trouvères Arméniens”, p. 251-253.

<sup>22</sup> „Поэзия Армении”, с. 61.

<sup>23</sup> „Les Trouvères Arméniens”, p. 253.

հայտնի գրողներ Անատոլ Ֆրանսը<sup>24</sup> և Պոլ Ադամը: Հանդիսության ժամանակ Քոմեդի Ֆրանսեզի դերասանները կարդացել են հայ բանաստեղծների ֆրանսերեն թարգմանությունները, հայ մենակատարներն ու հայ երաժշտական դպրոցի երգչախումբը կատարել են հայկական երգեր:

Նամակում Ա.Չոպանյանը նշում է, թե Բրյուսովին է ուղարկում իր երկու ֆրանսերեն գրքերը՝ „La vie et le Reve” և „Poèmes”. Նա նաև Բրյուսովին խորհուրդ է տալիս հայերին աջակցելու համար առանձին հեռագիր ուղարկել նաև Ֆրանսիայի ազգային ժողովի նախագահ Պոլ Տեշանեյին:

Նամակի մեջ հատկապես ուշագրավ է հետևյալ հատվածը. «Քաղաքակիրթ աշխարհը սկսած է հասկանալ, թե մարտիրոսացած ժողովրդի մեջ կան մշակութային գանձեր, իմացական ուժ, մարդկային արժեք և թե՛ բավական չէ միայն խոճալ անոր վրա, այլև կա քաղաքակրթական տեսակետից անոր ճանչնալու և մեծարելու պարտավորությունը»<sup>25</sup>:

Երկրորդ նամակը գրված է 1916 թվականի ապրիլի 24-ին: Ա.Չոպանյանն իր երախտագիտությունն է հայտնում Վ.Բրյուսովին այն նախաձեռնության համար, որ նա և ռուս նշանավոր բանաստեղծները ռուսերենով հրատարակելու են հայ բանաստեղծության լավագույն էջերը: Բացի այդ, նա Թիֆլիսի հայկական թերթերից իմացել է, որ Բրյուսովը Կովկաս է այցելել՝ հայկական միջավայրում շրջագայելու ու Հայաստանի բանաստեղծության մասին դասախոսություններ կարդալու: Ռուս գրողի այսօրինակ այցը նա համարում է սփոփանք հայ ժողովրդին պատահած «ահավոր աղետից» հետո:

Երրորդ նամակը գրված է 1917թ. մարտի 22-ին՝ Ռուսաստանի փետրվարյան հեղափոխությունից հետո, որի հետ Չոպանյանը կապում էր մեծ հույսեր. «Հաճեցեք ընդունիլ», - գրում է նա, - իմ սիրելի գրչակից եղբայր, շնորհավորանքը Հայաստանի մեկ բանաստեղծին, հին ու վշտակիր Հայաստանի, որուն ոգին այնքան խորապես ընկալել էք Դուք և նույնքան ջերմորեն փառավորել՝ անոր հանճարը»<sup>26</sup>:

Հովհաննես Թումանյանը, որն ուղեկցել է Վ.Բրյուսովին նրա կովկասյան ուղևորության ժամանակ և իր ելույթներում ու հոդվածներում երախտագիտություն հայտնել նրան ու ռուս նշանավոր բանաստեղծներ Կ.Բայլմոնտին, Վ.Իվանովին, Ալ.Բլոկին կատարածի համար, անհրաժեշտ է համարել հետևյալ հավելումն ավելացնել. «...ամեն թյուրիմացություն փարատելու համար, էստեղ պետք է ասեմ, որ միշտ մեր միջնադարյան բանաստեղծությունն է եղած հիացման գլխավոր առարկան»<sup>27</sup>:

Հայ միջնադարյան բանաստեղծությանը տված Վալերի Բրյուսովի գնահատականները գիտական են, լիովին հիմնավորված, վերժամանակյա, բայց միշտ ժամանակակից:

---

<sup>24</sup> Անատոլ Ֆրանս (1844-1924) – ֆրանսիացի նշանավոր վիպասան, երգիծաբան, գրաքննադատ: 1921-ին ստացել է Նոբելյան մրցանակ:

<sup>25</sup> Ա.Չոպանյան, Նամականի, Երևան, 1980, էջ 128:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>27</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. VII, Երևան, 1995, էջ 470:



## ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

*Հայաստանի բուն պատմությունն ինքնին միակ դյուցազներգությունն է, պատմագրի համար  
տակավին  
թաքնված մի գանձարան, որի հարստությունները  
պետք է միայն լույս աշխարհ հանել՝ որպեսզի  
փայլեն հազարավոր բազմազուն շողերով:  
**Վ. Բրյուսով***

Վալերի Բրյուսովը, նպատակ ունենալով „Поэзия Армении” աշխատությամբ ռուս ընթերցողին ներկայացնել հայ ժողովրդի բանաստեղծական աշխարհը<sup>1</sup>, կանգ չի առել այդ հրաշալի նախաձեռնության վրա: Նա քաջ գիտակցում էր, որ միայն գրականությունը բավարար չէ Հայաստանի և հայ ժողովրդի մասին ռուս հասարակությանը պատկերացում տալու համար<sup>2</sup>: Եվ այդ բացը լրացնելու անհագ ցանկությունն էլ նրան մղել է ընթերցողի սեղանին դնել նաև հայերի հերոսական պատմության տարեգրությունը. «Ոչ նուազ տպաւորութիւն թողած է իմ վրաս և հայ ազգին պատմութիւնը, մօտէն ծանօթանալ անոր հետ՝ ես անհրաժեշտ համարեցայ, քանի որ ժողովրդեան գրականութիւնը միշտ սերտ և խոր կերպով կապուած է իւր պատմութեան հետ»<sup>3</sup>: Հայ գրականությունից հայ ժողովրդի պատմությանն անցնելով՝ նա ոչ միայն ցույց է տալիս հայ գրականության պատմականությունը<sup>4</sup>, այլև հրաշալիորեն նկատում և գնահատում է հայ ժողովրդի՝ համաշխարհային քաղաքակրթությանը բերած անուրանալի նպաստը:

Հայ ժողովրդի գրականության և պատմության նկատմամբ Վ. Բրյուսովի հանապազ հետաքրքրությունը պայմանավորված էր համաշխարհային մշակույթի բրյուսովյան յուրօրինակ

<sup>1</sup> „Поэзия Армении с древнейших времен до наших дней”, Под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, Москва, 1916 (այսուհետև՝ „Поэзия Армении”).

<sup>2</sup> Վ. Բրյուսովի խորհրդածություններն ու թեմայի շուրջ դիտարկումները տե՛ս Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Խմբագրությամբ Գ. Ն. Հովնանի, Երևան, 1967, էջ 234:

<sup>3</sup> Վ. Բրյուսով, Տարեգրութիւն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին, թարգմանեց ռուս բնագրէն Հ. Յ. Վ. Մարգարեան (այսուհետև՝ «Տարեգրութիւն», թարգմանական հատվածներն ըստ այս բնագրի. համապատասխան էջահամարը կնշենք քաղվածքի մոտ՝ փակագծերում), Վենետիկ, 1931, էջ 6:

<sup>4</sup> „Поэзия Армении”, ст. 12. „...Армянская поэзия, взятая в целом, представляет другой, так же выдающийся интерес: исторический”.



ընկալման հետ, ըստ որի կան ժողովուրդներ, որոնց արարած մշակույթը համաշխարհային քաղաքակրթության համար առաջնիչ դեր է ունեցել. այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը գնում է իր ճանապարհով, ինքնաբավ է, առինքնում է իր տարբերակի՝ հատկություններով, ուստի և՛ արժանի է հատուկ ուշադրության: Վ. Բրյուսովը հիանում է «համաշխարհային մշակույթների խայտաբղետ բազմազանությամբ, նրա համար դա կարծես իր խոնարհման առարկայի՝ մարդկային ոգու տարբեր սահմաններն են», - գրում է Մ. Գասպարովը<sup>5</sup>:

Հայ մշակույթի վերաբերյալ նման դիտարկումներ առկա են «Ամֆիթատրովի «Հայաստան և Հռոմ» գրքի մասին» Վ. Բրյուսովի խորհրդածություններում. «...Հայերը... իրենց պատմական կյանքի հազարամյակի ընթացքում ստեղծել են ինքնուրույն կուլտուրա, իրենց ավանդն են մուծել գիտության մեջ և աշխարհին թողել մի հարուստ գրականություն՝ դժբախտաբար մինչև այժմ բավականաչափ չուսումնասիրված»<sup>6</sup>:

Նման մոտեցումը Վ. Բրյուսովին հանգեցնում է փոքր ժողովուրդների («փոքր» - միայն նրանց ներկա քաղաքական նշանակության իմաստով (ծնթ. հեղ. - Վ. Բ.), մասնավորապես՝ հայ ժողովրդի մշակույթի՝ համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում ունեցած դերակատարության ընդգծմանն ու ճանաչմանը: Հարցն ավելի քան հնչեղ էր Առաջին համաշխարհային պատերազմի ֆոնին, երբ Վ. Բրյուսովի ժամանակակիցների աչքի առջև իրականանում էր հերթական ոճիրը. բնաջնջվում էր մի ամբողջ քաղաքակրթություն<sup>7</sup>, և Վ. Բրյուսովը, հանձին հայ ազգի, բարձրացնում է «փոքր» ազգերի անցյալի վերհանման և վերաիմաստավորման խնդիրը: Հայ ժողովրդի անցած պատմական հերոսական ուղու վերաիմաստավորումը թույլ է տալիս Վ. Բրյուսովին ահազանգել ժամանակակից մարդուն՝ գիտակցաբար վարվել ներկա ժամանակի դեպքերի հետ և զգալ պատասխանատվություն պատմության ընթացքի հանդեպ: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության և ճանաչման հարցը դառնում է հրատապ. «Մեզ, ռուսներուս համար պարտականութիւն է գիտնալ Հայաստանի պատմութիւնը, առանց հաշուելու այն, որ ամէն կրթուած մարդու պարտականութիւնն է ճանչնալ Հայաստան» (էջ 15)<sup>8</sup>:

Այս հայացքով է Հայաստանի մեծ բարեկամը հայ գրականությանը զուգահեռ քննում նաև հայ ժողովրդի պատմության հարցեր<sup>9</sup>:

Հայ մշակույթին, պատմությանը ծանոթանալու նպատակով Վ. Բրյուսովը 1916թ. սկզբին այցելում է Հայաստան և նույն թվականին գրում, իսկ 1918 թ. Մոսկվայում Հայկական Կոմիտեի

---

<sup>5</sup> Հղումն այստեղ՝ Степура С. Н. Специфика перевода эпохи модернизма в России в 20-30-е годы XX века, „Молодой ученый“, 2011, №10, т. 2., ст. 42-47 (Гаспаров М. Л., Брюсов и буквализм, „Поэтика перевода“, Москва, 1988, ст. 37. „Брюсов любителю разноцветным многообразием мировых культур, для него это как бы разные грани вечного предмета его поклонения, человеческого духа“). Տե՛ս նաև Ս. Բերկով, Проблема национальной культуры в понимании В. Я. Брюсова, Брюсовские чтения 1966 года, Ереван, 1968, ст. 12-50:

<sup>6</sup> Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 168:

<sup>7</sup> «Տարեգրութիւն», էջ 13-14, 225-227, 238-239. Ծնթ. 1:

<sup>8</sup> Հմմտ. „Поэзия Армении“, ст. 10.

<sup>9</sup> «Բրյուսովն աշխատել է հայ պատմության բոցը վեր հանել, իսկ մոխիրը թողնել անցյալին» (Տերտերյան Ա., Բրյուսովը և հայ կուլտուրան, «Բրյուսովը և հայ պատմությունը» զլխում, Երևան, 1944, էջ 81): Арзумян М., - История армянского народа в освещении В. Я. Брюсова, Брюсовские чтения 1966 года, ст. 53-82.

նախաձեռնությամբ լույս է ընծայում «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը»<sup>10</sup> աշխատությունը: Կարծես ճակատագրի բերումով այս գիրքը վերահրատարակվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 1940թ.<sup>11</sup>: Գիրքն ունեցել է երկու՝ ամբողջական և հատվածական հայերեն թարգմանություն. ամբողջականն արել է Հ. Հովսեփի Մարգարյանը և տպագրել «Բազմավեպի» 1930 (7-8, 9-10) և 1931 (4, 6, 11) համարներում, որ հետագայում հրատարակվել է առանձին գրքով<sup>12</sup>: Առաջաբանի թարգմանության ծանոթագրությունը հուշում է, որ Վ. Բրյուսովն ինքն է ցանկացել իր գործը հայերեն թարգմանված տեսնել և ինքնագիրը նվիրել է թարգմանչին՝ հայերեն թարգմանությունը հնարավորինս արագ տեսնելու փափագով<sup>13</sup>:

Թե՛ գրականագետի, թե՛ պատմաբանի նուրբ ընկալումով Վ. Բրյուսովը կարողանում է բացահայտել մի ինքնուրույն աշխարհ, որի հետ շփումը նորանոր գաղափարներ պիտի արթնացներ<sup>14</sup>: Այս մտահղացումը հեղինակի խոստովանությամբ ծնվում է հայ գրականության ուսումնասիրությանը զուգընթաց. «Ես կարողացա գնահատել, թե ինչպիսի ահագին նշանակություն ունի հայ աշխարհը ամբողջ քաղաքակիրթ մարդկության համար»<sup>15</sup>:

«Տարեգրությունն» սկսվում է հեղինակի առաջաբանով, որը գիտական կարևորություն ունի ոչ միայն մեր առջև դրված ուսումնասիրության ձևաբովանդակային հարցերի, օգտագործած աղբյուրների, հեղինակի առջև ծառայած խնդիրների և բարձրացրած նպատակների վերհանման առումով: Այն մի յուրօրինակ ձոն է՝ ուղղված հայ ժողովրդի հերոսական պատմությանը, հայ գրականությունն ու պատմությունն ուսումնասիրելու և թարգմանաբար ներկայացնելու անհրաժեշտությունն ընդգծող մի նոր արահետ՝ ուղղված հատկապես ռուս առաջադեմ հասարակությանը:

Առաջաբանը հնարավորություն է տալիս ներկայացնել Վ. Բրյուսովի առաջ քաշած խնդիրներն ու նպատակները. դրանք կարևոր են ըստ այնու, որ օտար ընթերցողի համար բացահայտում են նաև հայագիտության մեջ առկա խնդիրների որոշակի համակարգ.

*1. Հայոց պատմության կարևորության ընդգծումը հայ գրականությանը զուգահեռ:*

Հեղինակը հայոց պատմությունը դիտում է համաշխարհային պատմության համատեքստում՝ կարևորելով նաև մեր ժողովրդի՝ համաշխարհային քաղաքակրթությանը բերած նպաստը. «Ես համոզուեցայ, որ հայ ճակատագրի մեջ ներփակուած կան ընդհանուր պատմութեան ամենանշանաւոր էջեր..., որոնք նոր լույս կարող են սփռել պատմագիտական շարք մը խնդիրներու վրայ» (էջ 6): Ավելին՝ հայ ժողովրդի պատմության հետ ծանոթացումը

<sup>10</sup> Արևելահայերեն հատվածաբար թարգմանությունը տե՛ս «Վալերի Բրյուսով. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գրքում, էջ 135-164:

<sup>11</sup> В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940:

<sup>12</sup> Քաղումների համար օգտագործել ենք հիմնականում այս թարգմանությունը, թեև այն զերծ չէ ոճական անհարթություններից, կետադրական վրիպումներից (հղումներն արել ենք կետադրական շտկումներով):

<sup>13</sup> «Բազմավեպ», Տարեգրութիւն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին, Առաջաբան հեղինակին, յուլիս-օգոստոս, թ. 7-8, 1930, էջ 21, հմմտ. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, ծնթ. 2, էջ 280:

<sup>14</sup> 1917 թ. Վ. Բրյուսովն առաջ քաշեց «Հայաստան» անունով պատկերազարդ քրեստոմատիա հրատարակելու ծրագիր, որը պիտի ունենար նաև Հայաստանի պատմության հիմնական գծերն ընդգրկող ներածական մաս ծանոթագրություններով և մեկնաբանություններով. տե՛ս Մոսկվայի հայկական կոմիտեին ուղղված նամակը. - Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 230-242:

<sup>15</sup> Նույն տեղում:

բացահայտում է նորովի հայացք Արևելքի և Արևմուտքի փոխհարաբերության վերաբերյալ (էջ 12)<sup>16</sup>:

2. Որպես հաջորդ հրատապ խնդիր Վ. Բրյուսովը մատնանշում է *հայ ժողովրդի պատմության անբավարար ուսումնասիրվածությունն ու մշակվածության պակասը*:

Հայ ժողովրդի պատմության հետ անգամ հարևանցի ծանոթացումը հեղինակին կանգնեցնում է մի կողմից հայ պատմագրության և թարգմանական գրականության միջազգային արժեքի կարևորության վրա, մյուս կողմից այն ցավալի գիտակցության, թե որքան քիչ բան է արված այդ ամենը գիտականորեն հիմնավորելու, ներկայացնելու համար: Մինչ «Տարեգրության» շարադրմանն անցնելը, հեղինակն ուսումնասիրել է հսկայական գրականություն և «շարունակ արգելքների է բախվել»: Նա կարդացել է մեծաքանակ լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն գիտական գրականություն: Այս բարդությունները հեղինակին հանգեցնում են այն մտքին, որ ամենալայն դռներն իր առջև կբացեր հայերենի իմացությունը: Սա մատնանշում էր նաև այն խնդիրը, որ հայալեզու գիտական գրականության թարգմանությունը նույնպես հրատապ էր:

Հայագետը բացատրում է, թե հայ ժողովրդի պատմությունը համակարգված մշակման չի ենթարկվել հայերի դարավոր գերության պատճառով: Սրան ավելացնում է ևս մի աղետ՝ թուրքական արգելքը. «ԺԹ. և Ի. դարերու հայագետները հարկադրուած էին գրեթե բոլորն ալ ծայրէն սկսելու, և ամէն քայլին՝ արգելքի հանդիպելու նիւթի բացակայութեան պատճառաւ... մանաւանդ երբ գտնուէին անոնք թրքական գաւառներու մէջ» (էջ 19):

3. Հրաշալիորեն ընկալելով, որ համառոտ կերպով հնարավոր չէ մի ժողովրդի քսանհինգդարյա պատմության անցքերը մանրամասնորեն ներկայացնել, Վ. Բրյուսովն *ընտրել է տարեգրությունը՝ որպես գիտահանրամատչելի պատումի ամենահարմար ձև, իսկ պատմական անցքերը ներկայացրել ուրվանկարի ձևով*. «Ես ինձի սահման դրի աննենգ *տարեգրի* (ընդգծումը հեղինակինը՝ Վ. Բ.) դերին նեղ շրջանակը, կրկնելով պատմութիւնը տարուէ տարի, դարէ դար» (էջ 24):

Հեղինակն ուշադրությունը կենտրոնացրել է առավելապես հայ ժողովրդի «քաղաքագիտական» պատմության վրա, առանց որի անհնար է կյանքի այլ կողմերն ուսումնասիրել. «Անկարելի է գրքոյկի մը սահմանի մէջ... բովանդակել Է. դար ն. Ք. մինչեւ Ի. դար յ. Ք. և զանազան փոփոխութիւնները թագաւորական կազմի, և այս շրջանի ժողովրդեան քաղաքակրթական զարգացումն, հաշուելով անոնց մէջ նաեւ կրօնքն, գիտութիւնը, գրականութիւնը, գեղարուեստը և տնտեսական երևոյթները, եւս առավել երբ կվերաբերի ազգագրական, պատմագրական և եւն. խնդիրներու» (էջ 23):

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ Վ. Բրյուսովն այս գրքույկով սուկ տարեգրի դեր չի ստանձնել. աղբյուրների քննական օգտագործումը, հասարակական-տնտեսական կյանքի սեղմ, սակայն բովանդակալից ու բազմակողմանի անդրադարձը (չնայած հաճախ քաղածո), ժամանակ առ ժամանակ հեղինակի տված գնահատականներն ու ուշագրավ

<sup>16</sup> Նման գաղափար նա արտահայտել էր նաև վերը նշված Ամֆիթատրովի գրքի քննադատության կապակցությամբ. «...Ամենաբարձր արժեքը միջնադարյան հայ քնարերգությունն է, որը հանդիսանում է երևակայության և պատկերների ճոխության, արևելյան փարթամության և զուտ- հելլենական ներդաշնակության ու զսպվածության սքանչելի զուգորդումը, ներդաշնակ միացումը Արևելքի և Արևմուտքի սկզբնահիմքերի» (Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 168):

դատողությունները մեր առջև բացում են Մովսես Խորենացու ավանդներին հետևող ուսումնասիրողի առաջադեմ հայացքը, իսկ նրա աշխատությունը ներկայանում որպես գիտաքննական ուսումնասիրություն, որ ցարդ չի կորցրել իր արժեքը: Գիտնական-Բրյուսովի ուշադրությունից չեն վրիպել կարևոր սկզբնաղբյուրները, ռուսերենով Մ. Տեր-Մովսիսյանի, Ն. Ադոնցի, Ն. Մառի, Հովսեփ Օրբելու աշխատությունները, ինչպես նաև Մեն-Մարտենի, Դյուլորիեի, Ֆ. Նևի, Ա. Չոպանյանի<sup>17</sup> և այլ հեղինակների գիտական հոդվածներ և հրապարակումներ, որոնք այդ ժամանակաշրջանի (և ոչ միայն) գիտության առաջնակարգ ու նոր խոսք ասող ուսումնասիրություններ էին և Վ. Բրյուսովի գրքույկի գիտական կուռ հիմքն էին ապահովում: Նա բարձր է գնահատում հայ պատմագրության դերը՝ նրանում տեսնելով պատմական արժանահավատություն. «Հայ հին պատմիչներու երկերը արժանապես գնահատուած են, քանի որ պահած են այնպիսի թանկագին տեղեկութիւններ, որոնց բոլոր ուրիշ աղբյուրները կորսուած են» (էջ 11): Այդուհանդերձ, հեղինակը քաջ գիտակցում է, որ իր արածը շարունակելի է, և հույս հայտնում, որ այս ձեռնարկին կհաջորդեն հայ աշխարհին վերաբերող ավելի հիմնավոր ուսումնասիրություններ: Գիտնականի սթափ հայացքը դրսևորվում է նաև աշխատության աղբյուրների օգտագործման եղանակի մեջ. ամեն առանձին գլխի սկզբնամասում («Դիտողություններ»)՝ տողատակում, արտահայտում է հիմնական աղբյուրները, ապա՝ օժանդակները, իսկ նրանց մասին ավելի մանրամասն ներկայացնում Մատենագիտություն բաժնում: Նա չի զլանում մեկ ականարկով տողատակում ներկայացնել ամեն առանձին աղբյուրի թույլ կամ ուժեղ կողմերը<sup>18</sup>: Այսպես՝ կարևորելով հատկապես Ֆ. Թուրնըփիզի աշխատությունը՝ նկատելով նրա թերություններն ու անհամապատասխանությունները, հընթացս սրբագրում նաև վրիպումները: Կամ հաճախ Վ. Բրյուսովի ուշադրության կենտրոնում են հայտնվում հայ ժողովրդի պատմության խորքային ուսումնասիրության կարոտ տեղիները<sup>19</sup>:

«Տարեգրության» 9 գլուխները ներկայացնում են հայոց նախնյաց պատմությունը մինչև 20-րդ դարի սկիզբը: Որպես նուրբ և խորաթափանց գրականագետ՝ Վ. Բրյուսովը կարողացել է հրաշալիորեն պատկերել Հայաստանի հոգևոր նկարագրին առնչվող հատվածները. մասնավորապես ուշադրության արժանի են Տիգրան Մեծի գահակալության, գրերի գյուտի, հայ դասական գրականության և պատմագրության, Բագրատունյաց իշխանության, Կիլիկիայի գրականության վերաբերյալ հատվածները: Նկատելի է, որ գլուխների նյութերը բաշխված են ոչ միօրինակ. վերջին՝ 19-20-րդ. դարերին վերաբերող գլուխը հպանցիկ է:

Որ դարաշրջանի մասին էլ որ խոսելիս լինի, ներկայացնելով օտար նվաճողների վայրագություններն ու նվաճողական քաղաքականությունը, թե խաղաղ շինարարության դարաշրջան, Վ. Բրյուսովն ընդգծում է հայ ժողովրդի հերոսական ոգին, պայքարելու

---

<sup>17</sup> Աղբյուրների մասին տե՛ս «Տարեգրութիւն», Մատենագիտութիւն, էջ 241-253: Ֆրանսիացի հայագետների մասին տե՛ս Ա. Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետներ» շարքից. Մեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014: Էդուարդ Դյուլորիեն հայագետ, Երևան, 2004: Ֆելիքս Նըր և հայ քրիստոնեական մատենագրությունը, Երևան, 2001:

<sup>18</sup> Առավել մանրամասն կարծիքներ կցել է Մատենագիտության բաժնում՝ ըստ համապատասխան աղբյուրների:

<sup>19</sup> Հասկանալի է, որ հետագա շրջանում հայագիտությունն այս բացերն աստիճանաբար լրացրել է: Տե՛ս «Տարեգրութիւն». «Հռոմեական ազդեցությունը Հայաստանի մէջ տակավին խուզարկողներէ քննուած չէ», էջ 67: Այլ կարծիքներ անդ, էջ 161, 178, 211:

պատրաստակամությունը. այդպիսին է Դարեհ Առաջինի հայտնի արձանագրության բրյուսով-յան մեկնաբանությունը, Հռոմի գերիշխանության դեմ հայերի մղած օրհասական պայքարը (Արտավազդի մասին պատմող հատվածների բացատրությունը), այս դարավոր պայքարի արդյունքում է, որ հայերը հայտնի են դարձել որպես մարտնչող ազգ, մաքառելն է դարձել հայ ժողովրդի ընտրությունը, մաքառումն ու արարումը... և նա դա արել է արժանապատվորեն:

Վ. Բրյուսովը հայ ժողովրդի պատմությունը դիտել է տալիս իր ողջ դրամատիզմով, հերոսականությամբ. կարմիր թելի պես ողջ ուսումնասիրության մեջ ձգվում է հայրենասիրության թեման: Հեղինակը մանրամասնորեն կանգ է առնում հայ ժողովրդի պատմության հատկապես այն հատվածների վրա, որոնցում դրսևորվել է ժողովրդի անկոտրում կամքն ու հերոսական ոգին. «Հռոմայ գերիշխանութիւնը Հայաստանի վրայ այս դարեշրջանին պարզ անուանական էր: «Գերիշխանութիւնը Հռոմայ Հայաստանի վրա, կ'ըսէ Մոմսէն, հակամեղ չափազանցնելու հռոմայեցուց յաջողութիւնները, ունայնամտութիւն էր»: Այս էր բոլոր արդիւնքը, որին հասավ Հռոմ երկդարեան պատերազմներու միջոցաւ» (էջ 55):

Իսկ Վ. Բրյուսովի ուշադրությունը գրաված քաղաքական գործիչները մեր պատմությամբ անցնում են իրենց հպարտ կեցվածքով և խոհական նկարագրով: Տիգրան Մեծին ներկայացնում է Միհրդատի հետ համեմատության մեջ. «Մեր կարծիքով պատմաբանները կախարդուած Միհրդատի վիպական պատկերէն, ըստ բաւականի չեն գնահատած Տիգրանի խոհեմագոյն պետական իմաստութիւնը՝ աւելի լուրջ իւր դիտաւորութեան մէջ» (ծնթ. 1, էջ 47-48)<sup>20</sup>:

«Հետաքրքրական է Տրդատի պարզության և խստաբարոյության հակադրումը Ներոնի նրբաճաշակությանը, հետաքրքրական են արժանապատվությամբ լի պատասխանները... Ըստ երևույթին ճոխության և պարզության, պերճանքի ու նախնականության նույն գուգորդությունը նկատվում էր նաև ամբողջ հայկական կյանքի կառուցվածքում»<sup>21</sup>:

Վ. Բրյուսովը գիտնականի անաչառությամբ, սակայն խոր ցավով և միաժամանակ ներքին հիացմունքով ցույց է տալիս, որ ավերածություններն ու ավերը հայ մշակույթը մի տեղից մյուսն են տեղափոխել, սակայն երբ մի տեղ մարել է հոգևոր լույսը, մի այլ տեղ այն առկայծել է<sup>22</sup>: Այլևս քաղաքական անկախությունից զրկված ժողովրդի ազատ ճախրելու տարածքը անվերապահորեն գրականությունն էր, այդ գիծը երևում է հայերի մոտ սկսած Հռոմի դեմ պայքարից մինչև սուլթանական ժամանակաշրջան: Դրանով է բացատրվում Վ. Բրյուսովի ներքին ոգևորությունը, երբ նախոսում է գրականության մասին. «Հայաստանի քաղաքական ճնշման դարերը միաժամանակ և եղան նրա գրականության բարձրագույն ծաղկման շրջանը»<sup>23</sup> կամ կիլիկյան շրջանի գրականության համար՝ «Հատկանշական է, որ հատկապես ազատ կյանքի ծայրահեղ ճնշման շրջանում մեծ ծաղկման հասավ հայ քնարերգությունը՝ արդարացնելով բանաստեղծի խոսքը. «Այն, ինչ չենք կարող արգելել, ինչ անհամատեղելի է արգելքի հետ, ե՛րգն

<sup>20</sup> Տիգրան Մեծի բնութագրումների համար Վ. Բրյուսովն օգտվել է հիմնականում Գ. Խալաթյանի („Очерк истории Армении в связи с общим ходом событий в передней Азии”, Москва, 1910), Կ. Կոստանյանցի („Краткий очерк истории Армении”, Москва (առանց հրատ. տեղի), Ն. Դոլեմի և Ա. Կաչի («Պատմություն հին Հայոց» („Histoire des anciens arméniens”), Ժնև, 1907) աշխատություններից. այդ աշխատությունները և նրանց մասին Վ. Բրյուսովի գնահատականները տե՛ս «Տարեգրություն», էջ 47-48:

<sup>21</sup> Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 137-138:

<sup>22</sup> Հմմտ. Տերտերյան Ա., էջ 82:

<sup>23</sup> Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 146:

է» (Ա. Ֆետ)»<sup>24</sup>: Հերոսականությունն է, որ հեղինակն ընդգծում է հայ ժողովրդի պատմության ամենատարբեր դրվագներում, նրա ուշադրությունից չի վրիպում ոչ մի կարևոր պատմական փաստ. ուշագրավ են հատկապես Տիգրան Մեծի գահակալության մասին պատմող էջերը, արաբական լծի թոթափումը, Բագրատունյաց տիրապետության հաստատման և շինարարական աշխատանքների մանրամասն նկարագրությունները և թե՛ Կիլիկիայի մասին պատմող առանձին գլուխը:

Արաբական խալիֆայության դեմ պայքարում Մամիկոնյանների ազատատենչ ոգին մատնանշելու համար մեջբերում է Ղևոնդի պատմության ոգեշունչ հատվածը. «Լաւ է այրաբար մեռնիլ հայրենեաց համար, քան թէ ողորմելի կեանք վարել և հայրենեաց սրբութիւնները ոտնակոխ եղած տեսնել» (ծնթ. 1, էջ 123):

Բագրատունյաց տիրապետության շրջանի մշակութային կյանքը բնորոշում է իր զարգացման բարձր աստիճանով. «Այդ շրջանի երկասիրությունները վկայում են, որ X-XI դարերի հայ գիտնականների գիտելիքների մակարդակը ամենևին ցածր չէր, քան նրանց եվրոպական գրչակիցների մակարդակը... այդ շրջանի գրականության, պոեզիայի ստեղծագործություններն արդեն պարունակում են հետագա շրջանի փարթամ ծաղկման սաղմերը, իսկ որոշ տեսակետից մնացել են անգերազանցելի»<sup>25</sup>:

8-րդ գլխում մի առանձնահատուկ հոգատարությամբ և ոգևորությամբ ներկայացնում է Կիլիկյան թագավորության պատմությունը (11-14-րդ դդ.), նա Կիլիկյան պետականության կարևորությունն ընդգծում է ոչ միայն ազգային առումով, այլև ավելի ընդարձակ՝ Ն. Ադոնցի խոսքերով՝ որպես մի կենտրոն, որն «իր մոտ քաջեց լավագույն ուժեր Հայաստանից»: Հայաստանը կարողացավ միջնադարի երկրորդ կեսում Արևելքում ստեղծել ճշմարիտ մշակույթի օջախ՝ միայնակ դիմադրելով «ամբողջ Ասիայի դեմ մղվող պայքարին»: Գիտամշակութային այն առաջընթացը, որ ունեցավ Կիլիկիան, Վ. Բրյուսովը բացատրում է հայ ազգի սեփական ուժերի նկատմամբ ունեցած մի ներքին հավատով. «Կիլիկիան, կարծես գիտակցելով, որ իրեն վիճակված է մի կարճատև (պետության համար) կյանք, մի տեսակ տենդային հապճեպությամբ ձգտեց դրսևորել իր ստեղծագործությունը հոգևոր կյանքի բոլոր մարզերում... Կիլիկիան կործանվելիս իր ժառանգությունը կտակեց ավելի երջանիկ (հարաբերականորեն միայն) նահանգներին... և նրանք պահպանեցին այդ ժառանգությունը թեկուզ և ոչ լրիվ... դա դարձավ հիմունքներից մեկը հայ ազգային մշակույթի նոր վերածնության համար»<sup>26</sup>:

Հատկապես մեծ է «Տարեգրության» վերջին՝ 9-րդ մասի «Մերձաւոր ժամանակի դեպքեր. 1065-1915» հատվածի ճանաչողական արժեքը. 20-րդ դարասկզբի պատմական դեպքերի ականատեսն ու ժամանակակիցն էր Վ. Բրյուսովը, որի աչքի առաջ Թուրքիան իրականացնում էր մի ամբողջ ժողովրդի կոտորած: Վ. Բրյուսովը խոսում է 1894-95թթ. կոտորածի և ինքնապաշտպանական մարտերի մասին: Նա իր վրդովմունքն է հայտնում և բարձրացնում արդարության կոչ. «...Թրքական նահանգներու մէջ մահուան դատապարտուածներու, սպանութիւններու, սովեալներու, հրկիզեալներու, աքսորի ճանապարհի վրայ, անապատներու

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>26</sup> Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 161:

մէջ – իբր բնակավայր նշանակուած... կոտորուեցան մէկ միլիոնէն աւելի հայ բնակիչներ (ուրիշ աղբյուրներ կհասցնեն 2.000.000 մարդու)» (ծնթ. 1, էջ 238-239):

«Տարեգրութիւնն» ավարտվում է թուրքերի դիպուկ բնութագրումով. „Турки продолжали свою прежнюю политику, не останавливаясь перед такими грандиозными избиениями, на которые не отважился и Ленгтимур”<sup>27</sup>:

Այսպիսով՝ Վ. Բրյուսովի «Տարեգրութիւնը» լուծում էր հետևյալ խնդիրները.

ա. Գիտականորեն և անաչառ կերպով օտար ընթերցողին ներկայացնում է հայոց պատմությունը: Այս առումով հատկապես կարևոր է «Տարեգրութիւնը» կցված մատենագիտական հարուստ ցանկը՝ համապատասխան համառոտ բնութագրումներով:

բ. Պատմությունն ու գրականությունը ներկայացված են գիրկընդիստն՝ քաղաքական պատմությունը մեզ ներկայանում է նաև գրական գործընթացի ուրվագծով:

գ. «Տարեգրութիւնը» մատնանշում է հայոց պատմության գիտական ուսումնասիրության կարոտ տեղիները, սրանով ընդգծվում է «Տարեգրութիւնը» գիտական կողմը ևս:

դ. Վ. Բրյուսովը ծայրահեղությունների մէջ չի ընկնում. նրա գնահատականները սթափ են, գիտականորեն հիմնավորված, մինևս ժամանակ հոգատարությամբ հյուսված:

ե. Նա հայոց պատմության անցքերը վերհանում է իրենց հերոսական ընթացքի մէջ. սրանով է առիւնքնում Վ. Բրյուսովի «Տարեգրութիւնը»՝ թե՛ հայ և թե՛ օտար ընթերցողի համար ցարդ պահպանելով իր ներգործուն ուժն ու ոգևորելու հատկանիշը:

զ. Վ. Բրյուսովի այս կարևոր ձեռնարկը ցարդ չի կորցրել իր նշանակությունը, և կարծում ենք՝ այն կրկին թարգմանելու անհրաժեշտություն կա, եթե նկատի ունենանք, որ արևմտահայերեն ամբողջական թարգմանությունն արվել է 1930թ. (1918թ. առաջին տպագիր օրինակից<sup>28</sup>) և շատ տեղերում խմբագրման և ծանոթագրման ենթակա է:

#### ԽՈՍՈՒՄ Է ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԸ

Ես կրցայ գնահատել, թէ ինչպիսի ակազիւն նշանակութիւն ունի հայ աշխարհն բոլոր քաղաքակիրթ մարդկութեան համար (էջ 6):

Ինչպիսի անսպառ գանձ մը կնեկայացնէ ժողովրդեան մը պատմութիւնը, որ կընդգրկէ երկու հազար հինգ հարիւր տարիներ, սերտ կերպով կապուած բոլոր նշանաւոր երեւոյթներու հետ, որոնցմով ցնցուած էր Հին աշխարհը (էջ 7):

Հայերը... ստեղծած են ինքնուրոյն մշակոյթ, արտադրած են իրենց գիտական գանձը, թողած են աշխարհի ամենահարուստ գրականութիւն, դժբախտաբար ոչ բաւական ուսումնասիրուած (էջ 11):

Հայոց պատմութիւնը կը ներկայանայ իր տեսակին մէջ մի գանձարան, ուսկից կարելի է հանել շատ բան մինչեւ այսօր իսկ, ինչպէս խաւարի մէջ ծածկուած թանկագին հարստութիւն մը (էջ 13):

<sup>27</sup> Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, ст. 115.

<sup>28</sup> Այս օրինակում առկա էին մի շարք թերություններ, որոնք սրբագրվեցին արդեն 1940թ. վերահրատարակված տարբերակում:

Մեզ՝ ռուսներու համար պարտականութիւն է գիտնալ Հայաստանի պատմութիւնը, առանց հաշուելու այն, որ ամէն կրթուած մարդու պարտականութիւնն է ճանչնալ Հայաստան (էջ 15):

Այս մէկ տաճարը միայն արդէն (իմա՛ Զվարթնոց) կը վկայէ Հայոց զօրեղ յուշարձան-գեղարուեստական ստեղծագործութեան, միջին դարու սկիզբները (էջ 173):

Բոլոր տուեալները կը ցուցնեն, որ Հայաստանի մէջ Բագրատունեաց ժամանակ կրթութեան միջին մակերեւոյթը բավական բարձր եղած էր, թերեւս բարձրագոյն, քան ժամանակակից եւրոպական շատ երկրները (էջ 179):

Կլիկիոյ թագաւորութիւնը հայ ժողովրդեան պատմութեան մէջ փայլուն էջ մըն է՝ ինքնուրոյն և ամենակարեւոր (էջ 203):

Մատթէոս Ուռհայեցոյ պատմութիւնը առանձին մասանց մէջ (վերջերը) կենդանութիւն կառնէ յուզումնալի նկարագրութեամբ, տեղ-տեղ մինչև իսկ փայլուն բանաստեղծութեամբ (երկրաշարժի երկու նկարագրութիւն)՝ պահելով ամենուրեք դիւցազներգական եղանակն, որ կլիշեցնէ Մովսէս Խորենացին (էջ 207):

Ներսէս Շնորհալոյն բանաստեղծական գրութիւնները գրուած են բացառիկ արուեստագիտօրէն ճարտարութեամբ, բայց ներշնչուած սրտի զեղումով (էջ 210):

Հայաստան միջին դարու երկրորդ կեսին կրցեր է ստեղծել Արեւելքի մէջ իսկական քաղաքակրթութեան վառարան մը՝ միայնակ մաքառելով բոլոր Ասիոյ դէմ (բացատրութիւնն Ա. Զօպանեանի, էջ 212):

Բոլոր Առաջաւոր Ասիան անցած էր Թուրքերու ձեռքը, և որու վրայ իջաւ վայրենի, աղջամղջային խաւար եւ տգիտութիւն: Սելճուքներէ և Մոնղոլներէ շատ աւելի նուազ հակամէտ էին Թուրք-օսմանները դէպ ի քաղաքակիրթ կեանք. իրենց կոչումն էր կործանում և ոչնչացում, և այսպիսի ճնշման ծանրութիւնը զգացին բոլոր նուաճուած ժողովուրդները, որոնց մէջ Հայերն ալ (էջ 226):

Սկսեալ Ֆրիկէն և Յովհան Երզնկացոյց երկար շարք մը կայ տաղանդաւոր բարձր քնարերգուներու՝ Կոստանդին Երզնկացի, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, Քերոբէ, Յովհաննէս Երզնկացի, Յովհաննէս Թլկուրանցի, Նահապետ Քուչակ, Գրիգոր Աղթամարցի և ուրիշ շատեր: Անոնց բանաստեղծութիւնը թանկագին է իրենց գեղարուեստական արժէքով, միեւնոյն ժամանակ կու տայ շատ նիւթ պատմագրի, քանի որ սիրոյ և բախտի երգերուն հետ անխուսափելիօրէն անոնց մէջ կը հնչուին և դառն գանգատներ ժամանակակից ահռելի դէպքերուն (էջ 232):





## ՊԱՐՈՒՅՐ ՄԱՀԱԿՅԱՆ

*Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### Վ. ԲՐՅՈՒՍՈՎԸ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ

Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուում Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը հատկացված է հատուկ տեղ: Գրքի առաջաբանում ռուս նշանավոր գրողը տարբեր հիմնավորումներով ազդարարում է, թե Սայաթ-Նովան հանճարեղ բանաստեղծ է, վեր է բարձրացել իր դարից ու պատկանում է բոլոր ժամանակներին: Նա համեմատվում է աշխարհի մեծագույն բանաստեղծների Հորացիուսի<sup>1</sup>, Ալեքսանդր Պուշկինի<sup>2</sup>, Պոլ Վեռլենի<sup>3</sup> հետ: Տողատակում բերված թվերը պարզ ապացուցում են, թե որքան տարբեր դարաշրջանների ու երկրների մեծությունների հետ է համեմատում Բրյուսովը Սայաթ-Նովային:

Իր կազմած ժողովածուի ծանոթագրություններում ռուս գրողը նշում է, թե Սայաթ-Նովայի վերաբերյալ առկա է հարուստ հայերեն գրականություն: Թվարկում է Գևորգ Ախվերդյանի, Կարապետ Կոստանյանցի, Հովհաննես Թումանյանի, Նիկոլ Աղբալյանի անունները: Ֆրանսերեն աղբյուրներից օգտվել է Մինաս Չերազի «L'Arménie» («Հայաստանը») թերթի նյութերից, ինչպես նաև Արշակ Չոպանյանի ֆրանսերեն թարգմանություններից: Նրան ծանոթ էին նաև Յակով Պոլոնսկու, Ա. Գարդենինի Սայաթ-Նովայի խաղերի ռուսերեն մի քանի թարգմանությունները: Բրյուսովը ընտրել է միայն Սայաթ-Նովայի 12 հայերեն խաղերը, որովհետև նրա վրացերեն և թուրքերեն («грузинские и татарские») բանաստեղծությունները դեռևս հրատարակված չէին, ինչպես նաև դեռ հայերեն խաղերն էլ լիովին լույս չէին տեսել<sup>4</sup>: Չնայած «Поэзия Армении» ժողովածուի լույս աշխարհ գալու օրերին դեռևս հրատարակված չէին Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը, սակայն, ինչպես գրքի առաջաբանում Բրյուսովը նշում է. «...իսկ վրացիները նրան համարում են իրենց բանաստեղծը»<sup>5</sup>:

Նկատենք, որ Սայաթ-Նովայի կենսագրական որոշ փաստեր, որոնք բերում է Բրյուսովը, ժամանակի ընթացքում ճշգրտվել են: Նա հենվում է այն տեղեկությունների վրա, որոնք կային իր ապրած ժամանակների սայաթնովագիտության մեջ:

<sup>1</sup> Քվինտուս Հորացիուս (65–8 Ք.Մ.Ա.) – հռոմեացի նշանավոր բանաստեղծ:

<sup>2</sup> Ալեքսանդր Պուշկին (1799–1837) – ռուս հռչակավոր բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ:

<sup>3</sup> Պոլ Վեռլեն (1844–1896) – լավագույն սիմվոլիստներից մեկը համաշխարհային գրականության մեջ:

<sup>4</sup> «Поэзия Армении с древнейших времен до наших дней», под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, Москва, 1987, с. 502. Այսուհետև կնշենք «Поэзия Армении»- Պ.Ս.:

<sup>5</sup> «Поэзия Армении», с. 60 («...а грузины считают его своим поэтом»).

Սայաթ-Նովան իր հետաքրքիր ու բովանդակալից կյանքով լցրել է հայ գրականության ողջ XVIII դարը: Ըստ Բրյուսովի նա ծնվել է 1719-ին և սպանվել է 1795-ին՝ Ադա Մահմեդ խանի դեպի Թիֆլիս կատարած արաշավանքի ժամանակ:

Նա կրկնում է ժողովրդական այն ավանդությունը, ըստ որի, երբ Սայաթ-Նովան լսում է Ադա Մահմեդ խանի դեպի Թիֆլիս կատարվելիք արշավանքի մասին, Հաղպատից շտապում է Թիֆլիս, զավակներին ուղարկում է Մոզդոկ, և ինքն ընկնում է հայկական եկեղեցում՝ հրաժարվելով դառնալ մահմեդական. «Персы потребовали, чтобы все вышли из церкви и приняли ислам. Саят-Нова отвечал одним стихом по татарски:

Из храма, нет! Не выйду я, не отрекуюсь я от Христа!»<sup>6</sup>

Առաջաբանում համառոտ ակնարկ կա հայ աշուղական ու գուսանական արվեստի վերաբերյալ: Գուսանական երգերը հայերի մոտ ընդունված են եղել հեթանոսական ժամանակներում, և դրանք շարունակվել են սիրված մնալ քրիստոնեական դարերում, որոշակի ժամանակահատվածից փոխվելով աշուղության՝ կրելով պարսկական աշխարհիկ բանաստեղծության ազդեցությունը:

Սայաթ-Նովան ծնողների կամքով ջուլիակ է դառնում, սակայն նրան հետաքրքրողը երգն ու երաժշտությունն էին: Աշխատանքից ազատ ժամանակ մանուկ Սայաթ-Նովան վագում էր լսելու քաղաքի հրապարակներում երգող աշուղներին: Սայաթ-Նովան իր թուրքերեն խաղերից մեկում, որը բնականաբար ծանոթ չէ Վ. Բրյուսովին, հայտնում է.

Տասներկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաբարին  
Տասներեք տարեկանում իմ արհեստում տըվի, անցա,  
...Տասըրթ տարիս երբ բոլորեց, տեսա և վարդ, և  
վարդաստան...<sup>7</sup>

Ինչպես պարզ երևում է, արդեն 18 տարեկանում Արությունը ստանում է Սայաթ-Նովա աշուղական անունը: Սայաթ-Նովան իր թուրքերեն խաղերը գրել է հայատառ, սակայն մեծ մասամբ խորագրերը հայերեն են. «Էս դիվանի Արութինի ասած է»<sup>8</sup>:

Բրյուսովը համոզված է, որ ինքնակրթությամբ Սայաթ-Նովան ձեռք է բերել լայնածավալ գիտելիքներ: Դա պարզորոշ երևում է նրա բանաստեղծությունների խոր մտքերից ու ազգերի, երկրների վերաբերյալ հաղորդած փաստերից: Բացի այդ, նա շատ լեզուներ գիտեր և հավասարապես ստեղծագործում էր երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն ու թուրքերեն: Մորուս Հասրաթյանը դրա վրա ավելացնում է պարսկերենը, իսկ XX դարավերջի անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաունսթոն էլ հավելում է ռուսերենը: Նա պատմում է հետևյալը:

Վրաց արքայազն Թեյմուրազը Ս. Պետերբուրգում հանդիպում է Սայաթ-Նովայի կրտսեր որդուն՝ Օհանին, որին կոչում էին Իվան Մեիդով, ու խնդրում է մի տեսրում գրել իր հոր այն

<sup>6</sup> „Поэзия Армении“. с. 61 («Պարսիկները պահանջեցին, որ բոլորը դուրս գան եկեղեցուց և ընդունեն իսլամ: Սայաթ-Նովան պատասխանեց թուրքերեն մի չափածոյով.

Եկեղեցուց դուրս չեմ գա, Քրիստոսին չեմ ուրանա» (թարգմանությունը մերն է – Պ.Ս.):

<sup>7</sup> Սայաթ – Նովա, Հայերեն, վրացերեն, աղբյուրներն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ207-208:

<sup>8</sup> Տե՛ս Սայաթ-Նովա, Խաղեր, նմանահանություն, Երևան, 1963, էջ 2:

բանաստեղծությունները, որոնք հիշում է: Օհանի տետրակում հայտնվում են նաև վեց ռուսերեն խաղեր, որոնք ունեն կենսագրական նշանակություն:<sup>9</sup> Բրյուսովը հայտնում է նաև, թե իբր Սայաթ-Նովան անտարբեր չի եղել վրաց արքայադստեր նկատմամբ, միաժամանակ նրան հայտնի է, որ բանաստեղծի կնոջ՝ Մարմարի մահից հետո Սայաթ-Նովան թողնում է պալատը, ընդունում հոգևոր կոչում և տեղափոխվում Հաղպատի Սուրբ Նշան վանքը:

Բրյուսովը հերթով չի վերլուծել Սայաթ-Նովայի իր կողմից թարգմանած 12 խաղերը, նա բանաստեղծի ստեղծագործությունը բնութագրում է ընդհանուր գծերով՝ փորձելով ներկայացնել վերջինիս քերթվածների հարուստ երանգապնակը: Նա Սայաթ-Նովային անվանում է նրբերանգների բանաստեղծ և այդ առումով համեմատում է Պոլ Վեռլենի հետ. «Իրավամբ Սայաթ-Նովային կարելի է անվանել «նրբերանգների բանաստեղծ»»: XVIII դարում ասես նա կատարեց այն պատգամը, որ մեկ դար հետո տվեց Վեռլենը.

Pas la couleur, rien que la nuance!

(«Ոչ թե գույնը, այլ միայն նրբերանգը»):<sup>10</sup>

Այո՛, վառ գույներ պետք չե՛ն: Ճշմարիտ բանաստեղծը ընթերցողին կամ ունկնդրին զգալ է տալիս ամեն ինչ մի գույնից մյուսին հազիվ նկատելի անցումների ուժով: Բայց միաժամանակ և որքան սուր, խոր ու հյութեղ են Սայաթ-Նովայի երգերում այդ «երանգները». «մենք դրանք ընկալում ենք որպես ամենավառ գույներ, որոնց մրցակցել չի կարող նվազ հաջողակ (ուղղակի ասենք՝ նվազ հանճարեղ) բանաստեղծների ո՛չ մի վրձնահարված, որոնք ներկը շատ են թանձր քսում »:<sup>11</sup>

Բրյուսովը համոզված է, որ Սայաթ-Նովան էլ Հորացիուսի ու Պուշկինի նման հավերժանալու է դարերի մեջ, և դեպի նրա հուշարձանը տանող արահետը խոտով չի ծածկվի: Պուշկինը գրում է.

Я памятник себе воздвиг нерукотворный,

К нему не зарастет народная тропа...<sup>12</sup>

<sup>9</sup> Charles Dowsett, *Sayat-Nova, An 18th century troubadour, A Biographical and Literary Study*, Lovanii, 1997, p. 4.

<sup>10</sup> Ֆրանսիացի բանաստեղծ Պոլ Վեռլենը համարվում է XIX դարի երկրորդ կեսի լավագույն սիմվոլիստ բանաստեղծը համաշխարհային պոեզիայում: Նրա „Romances sans paroles“, (1974թ. «Սիրերգեր առանց խոսքի») ժողովածուում կարդում ենք.

*Il pleure dans mon coeur*

*Comme il pleut sur la ville.*

*Quelle est cette langueur*

*Qui pénètre mon coeur ?*

*Լաց է սրտումս՝*

*Ասես յաց է քաղաքի վրա:*

*Մա ի՛նչ թուլություն է,*

*Որ սիրտս է մտել: (Տե՛ս, Paul Verlaine, Poésies, Moscou, 1974, p. 96, տողացի թարգմանությունը մերն է- Պ.Ս.)*

<sup>11</sup> „Поэзия Армении“, с. 62.

<sup>12</sup> А.С. Пушкин, Избранные сочинения в двух томах, т. I, Москва, 1980, с.423.

Սայաթ-Նովան իր հանրահայտ «Դուն էն գրլխեն իմաստուն իս...» խաղում տվել է սեփական հանճարի գնահատականը.

Ամեն մարդ չի կանայ խրմի՝ իմ ջուրըն ու՝ ըիշ ջըրեն է.  
Ամեն մարդ չի կանայ կարդայ՝ իմ գիրըն ու՝ ըիշ գըրեն է.  
Բունիաթըս ասագ չիմանաս, քարափ է, քարուկըրեն է...<sup>13</sup>

Նույն հատվածը Բրյուսովը դնում է իր առաջաբանում հետևյալ թարգմանությամբ.

*Не всем мой ключ гремучий пить: особый вкус ручьев моих!*  
*Не всем мои писанья чтить: Особый смысл у слов моих!*  
*Не верь: меня легко свалить! Гранита твердь основ моих!*<sup>14</sup>

Բրյուսովը ռուսերեն է թարգմանել Սայաթ-Նովայի հետևյալ հայերեն խաղերը: Բերում ենք այդ խաղերի ռուսերեն ու հայերեն սկզբածքները.

1. „Я в жизни вздоха не издам, докол джан ты для меня!”  
«Աշխարհումըս ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա»:

2. „Я на чужбине соловей, а клетка золотая — ты!”  
«Յիս մէ դարիբ բըրբուլի պէս, դուն օսկէ դափազի նըման»:

3. „Нынче милую мою видел я в саду”.  
«Էսօր իմ եարին տեսայ՝ բաղչի մէջըն ման գալով»:

4. „Меня и милую мою година та же родила, знай”.  
«Ինձ ու իմ սիրեկան եարին մէ տարի բերած գիդենաք»:

5. „Чужбина — мука соловья: год сада он родного ждет!”  
«Վունցօր վուր դարիբ բըրբուլըն մե տարով բաղին կարօտ է»:

6. „Ах, почему мой влажен глаз и кровь на сердце? жжет она!”  
«Էնդոր աչքըս չէ ցամաքում՝ սրտիս մէջըն արին մընաց»:

7. „Откуда ты? (я соловью)”  
«Ուստի՞ գուրաս, դարիբ բըրբուլ»:

8. „Твоих грудей гранат - что меч”.  
Շատ հեռացած է հայկական բնագրից:

9. „Ты силен ум: таким рожден, — себя глупцу равнять зачем?”  
«Դուն է՛ն գրլխեն իմաստուն իս, խիլքդ յիմարին բաբ մի՛ անի»:

10. „Угодливо, народный раб! Служить ступай, Саят-Нова!”  
«Արի՛ համով դու լուղ արա, իսա՛ լիսի նոքար Սայաթ-Նովա»:

11. „Ты, безумное сердце ! мне внемли”.  
«Արի՛, ինձ անգաճ կա՛լ, ա՛յ դիվանա սիրտ»:

<sup>13</sup> Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, Վարդգես Հրաչի Զարգարյանի աշխատասիրությամբ, Երևան, 2013, էջ 40:

<sup>14</sup> „Поэзия Армении” с. 356.

12. „Из всех людьми хваленных лир полней звучишь ты, каманча!”

«Ամէն սագի մէջըն գոված՝ դուն թամամ դասն՝ իս, քամա՛նչա»:

Վ. Բրյուսովը հիմնականում ընտրել է Սայաթ-Նովայի սիրո խաղերը, սակայն բոլորովին չի մոռացել վերջինիս խոր փիլիսոփայությունն պարունակող որոշ խաղեր: Վ. Բրյուսովի թարգմանությունների համար տողացի թարգմանություններն արված են Գևորգ Ախվերդյանի պատրաստած և 1852 թվականին Մոսկվայում լույս տեսած հայերեն խաղերի ժողովածուից: Այս ժողովածուն լույս աշխարհ գալու գործում կարևոր դեր է կատարել նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը, որի և Ախվերդյանի նամակագրությունը պարզորոշ պատկերացում է տալիս, թե երկու նվիրյալ հայորդիներն ինչպես են նախապատրաստել Սայաթ-Նովայի խաղերի լույս աշխարհ գալը: Գ. Ախվերդյանի նամակներից իմանում ենք, որ նա երկու տարի ուսումնասիրել է Սայաթ-Նովայի խաղերը և դրա հետ միասին Թիֆլիսի հայ բարբառը և վախենում է Սայաթ-Նովայի խաղերն ու իր կատարածը որևէ մեկին ցույց տալ: Գ. Ախվերդյանը ոչ միայն գտել է Սայաթ-Նովայի խաղերի դավթարը, դրա մեջ առանձնացրել հայերեն խաղերը, այլև կատարել է մի անգնահատելի գործ, նա իր հրատարակած ամեն մի խաղին կցել է բացատրական բառարան, որի միջոցով խաղի բովանդակությունը լիովին հասանելի է դառնում հայ գրական լեզվին տիրապետող ամեն մի ընթերցողի: Նա փորձել է տալ նաև **գուսան** ու **աշուղ** բառերի բացատրությունը. «Իսկ ինձ թվում է, որ **Գուսանքը** և **Աշուղը** նույնիմաստ բառեր են»:<sup>15</sup>

Փաստորեն հայ սայաթնովագիտության առաջին շրջանը լիովին կապվում է Գևորգ Ախվերդյանի, մասամբ էլ Մկրտիչ Էմինի կատարածի հետ: Հենց այդ նույն նվաճման արդյունքն է նաև Բրյուսովի կատարած Սայաթ-Նովայի տասներկու հայերեն խաղերի թարգմանությունը:

Սայաթ-Նովայի դավթարի հետագա ճակատագրի մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Հովհաննես Թումանյանի 1921 թվականի հոկտեմբերի 19-ի Հայաստանի լուսժողովումին ուղղված նամակը: Այն մեջբերում ենք նույնությամբ.

Հայաստանի Խորհրդային Հանրապետության  
ընկեր լուսժողովումին՝

Իր ժամանակին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսում Սայաթ-Նովայի ժառանգներից ձեռք էր բերել Սայաթ-Նովայի ձեռագիր տետրակը: Էդ տետրակը վարչության որոշումով պահվում էր ինձ մոտ: Հայ գրողների ընկերության անունը փոխվեց էս տարվա սկզբներում – դարձավ Հայ գրչի մշակների միություն:

Այժմ Հայ գրչի մշակների միության վարչության համաձայնությամբ հիշյալ տետրակը ուղարկում եմ Ձեզ՝ դնելու Հայաստանի թանգարանում:

Տետրակը բաղկացած է 140 էջից և թվահամարված է հետագայում, իմ ձեռքով:

Հայերեն երգերը գրված են վրացական տառերով, թուրքերեն երգերը՝ հայկական տառերով:

Հայ գրչի մշակների միություն

<sup>15</sup> Տե՛ս Գրական ժառանգություն, 3, Գ. Ախվերդյան, նամակներ, Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Արփիկ Ավետիսյան, Երևան, 1964, էջ 240:

Այս փաստը պերճախոս ձևով վկայում է, թե Հովհաննես Թումանյանի համար Սայաթ-Նովան ինչպիսի ազգային մեծություն էր: Դա երևում է այն բազմաթիվ շնորհակալական խոսքերից, որ մեծ ազգասերն ու մտածողը ուղղել է Վալերի Բրյուսովին՝ Սայաթ-Նովային ճիշտ գնահատելու և „Поэзия Армении” ժողովածուն հրատարակելու համար:

Հովհ. Թումանյանը ուշիուշով հետևել է, թե ինչ ձևով է թարգմանվում Սայաթ-Նովայի ստեղծագործությունը ռուսերենով: 1915 թվականի սեպտեմբերին „Русская мысль” պարբերականում Վալերի Բրյուսովը տպագրում է „Песни ашугов перевод с армянского” («Աշուղների երգերը՝ թարգմանություն հայերենից») հրապարակումը՝ թարգմանչի առաջաբանով, որի մեջ կարդում ենք. «Եվ կարելի է ասել, ժողովուրդ, որը գոնե տվել է Նահապետ Քուչակին և Սայաթ-Նովային (երկու բանաստեղծների, որոնց բանաստեղծությունները ներկայացվում են ընթերցողի ուշադրությանը)՝ հենց դրանով արդեն իրեն ընդմիջտ գրանցել է մարդկության համընդհանուր ստեղծագործությանը մասնակցող քաղաքակարթված ազգերի շարքում» (թարգմանությունը մերն է – Պ.Ս.):<sup>17</sup>

Այս հրապարակման առիթով Հովհաննես Թումանյանը հանդես է եկել հատուկ հոդվածով՝ «Քուչակ Նահապետի և Սայաթ Նովայի ռուսերեն թարգմանությունների առթիվ»:<sup>18</sup> Հ. Թումանյանին հատկապես գնահատելի է թվում այն, որ Վ. Բրյուսովը հայերի մասին գրում է, թե Հայաստանը «գրեթե երկու հազար տարի Եվրոպայի առաջապահն է եղել Ասիայում»:<sup>19</sup>

Թումանյանը իր անհամաձայնությունն է հայտնում բրյուսովյան թարգմանությունների որոշ անճշտությունների վերաբերյալ: Բերենք դրանցից մեկը. «*Гривыт* ձովեմեն դուս եկած՝ ուշ, ջեյիրան իս ինձ ամա»:

Սայաթ-Նովայի խաղի այս տողը Բրյուսովը թարգմանել է հետևյալ ձևով.

„О, дочь огня! крылатый конь, степная лань ты для меня”.

Թումանյանը համոզված է, որ «ուշ ջեյիրանը» բառակապակցություն է, որը վերաբերում է հայկական հրաշապատում հեքիաթներում պատահող ծովից դուրս եկած հրեղեն ձիուն՝ հրեղեն ջեյրանին և ոչ թե տափաստանների ջեյրանին:<sup>20</sup>

1997 թվականին «Սայաթ-Նովա» սովարածավալ մենագրության մեջ (505 էջ) Չարլզ Դաուսեթը իր անհամաձայնությունն է հայտնում Սայաթ-Նովայի բրյուսովյան թարգմանությունների առիթով: Օրինակ նա համաձայն չէ հետևյալ տողի թարգմանության հետ՝ «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս...» խաղից.

<sup>16</sup> Տե՛ս Սայաթ-Նովա, Խաղեր, Նմանահանություն, էջ VIII:

<sup>17</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասն հատորով, հ. VII, Երևան, 1995, էջ 621 („И можно сказать, что народ, который дал хотя бы Нахапета Кучака и Саят-Нову (двух поэтов, стихи, которых предлагаются вниманию читателей), тем самым уже навсегда включил себя в число культурных наций, участвующих в совместном творчестве человечества”):

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 197-204:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 200:

Я Богом истинным клянусь: меня нещадно **гнать** зачем?

### Հայերենն է

Աստծու սերըն կանչողի պէս դռնէմէղ **ջուղար** մի՛ անի:

**Ջուղար** բառը Գ. Ախվերդյանը բացատրում է հետևյալ ձևով. «Ջուղար – պատասխան, մերժում»:

Չ. Դաուսեթը **гнать**-ը պահանջում է թարգմանել **отвечать—answer**, ինչպես թարգմանում է Գ. Ախվերդյանը:<sup>21</sup>

Նման պահանջները դնել Վ. Բրյուսովի թարգմանությունների առիթով այնքան էլ ճիշտ չէ: Չմոռանանք, որ Բրյուսովը տիրապետում էր բազմաթիվ լեզուների, սակայն, նա չէր տիրապետում հայերենին, այնպես, ինչպես Չարլզ Դաուսեթը, որը նույնիսկ Սայաթ-Նովայի հետևությամբ հայերեն բանաստեղծություններ էր գրում: Բերենք նրա մենագրության սկզբում դրված Սայաթ-Նովային նվիրված խաղն ամբողջությամբ.

To Sayat-Nova

Իփոր Դրախտում մի՛ր Նախահէր  
Էվային սիրով նայում էր,  
Ծաղկալի ծառում զվարթ բլբլում  
Միրահար էլ, խրախանում էր:  
Իփոր Էվայի հիդ Ադամ  
Մեւերես Դրախտից մեկնում էր,  
Անապատում դարիբ բլբլում  
Տըխրադէմ ցաւակըցում էր:

Իփոր աշուղ Սայաթ-Նովա  
Գոզալ յեարին հիդ խաղում էր,  
Գուլշանում էրջանիկ բլբլում  
Ուր վարդին ուրախ էրգում էր:  
Իփոր ամօթով սագանդար  
Ապարանից արքունիում էր,  
Ցուրտ տերեւաթափ պարտիզից  
Խըռով բլբլուն էլ կաղում էր:

Կովկասը վուրտիդ Ադեն էր  
Էսօր մէ տըխրալի տիս է:  
Ձեն բլբլուլին վունչ լըռեցաւ,  
Միշտ Կարմիր Վարդին լալիս է,  
Սայաթ-Նովուն էլ զօրեղ ձեն  
Դարուց ի դարս միզ գալիս է:  
Կամուրջ վուր ծեր վարպետ շինեց  
Աշխարին միշտ հույս տալիս է:<sup>22</sup>

<sup>21</sup> Charles Dowsett, Sayat-Nova, p. 95.

Այս խաղի իմաստը Չարլզ Դաուսերը բացատրում է իր գրքի վերջաբանում՝ Սայաթ-Նովային ներկայացնելով որպես Կովկասի ժողովուրդների բարեկամության ջատագով, այդ բարեկամությունը կամրջող:<sup>23</sup>

Հովհաննես Թումանյանը Վալերի Բրյուսովի *„Поэзия Армении“* ժողովածուին անդրադարձել է նաև այլ առիթներով՝ հոդվածներում և ելույթներում:

1916 թ. հունվարի 13-ին Վալերի Բրյուսովը հայոց բանաստեղծության վերաբերյալ զեկուցում է կարդացել Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում: Նույն երեկոյին Թումանյանը հանդես է եկել մի ճառով, որով ունկնդիրներին ներկայացրել է Բրյուսովին ու նրա կատարածը: Այդ ճառը տպագրվել է «Հորիզոն» օրաթերթի 1916 թվականի հունվարի 17-ի թիվ 11-ում՝ «Խոսք Վ. Բրյուսովի դասախոսության առթիվ» վերտառությամբ: Այս ճառում կարդում ենք. «Նա (այսինքն Վ. Բրյուսովը – Պ.Ս.) հայոց բանաստեղծությունը անվանում է հայ ազգի ազնվականության վկայական»:<sup>24</sup>

Թումանյանը Բրյուսովին բացատրել է, թե ինչ է նշանակում **Սայաթ-Նովա** աշուղական անունը: Նա հենվել է հնդկական և արաբական բառարանների ընձեռած փաստերի վրա և եկել այն եզրահանգման, թե Սայաթ-Նովա նշանակում է **երգի տեր, իշխան**:<sup>25</sup>

Բրյուսովյան թարգմանության հմայքը պատկերացնելու համար դիտարկենք «Քամանչա» խաղի թարգմանությունը: Սա միակ խաղն է, որ Բրյուսովը ներկայացրել է վերնագրով՝ *„Каманча“*: Խաղի բնագրի տողատակում թարգմանիչը ներկայացնում է քամանչայի արտաքին նկարագիրը: Քամանչան մի գործիք է, որով աշուղները նվագակցում են իրենք իրենց, երբ երգում են: Այդ գործիքի մասերն ունեն առանձին անվանումներ՝ ականջ, գլուխ, փոր: Քամանչան լարային գործիք է, և նրա վրա նվագում են աղեղով, որի վրա ձգված են ձիու մազեր: Աշուղի նվագից առաջ սովորություն է եղել վերջինիս մատուցել թեյ և սուրճ: Աշուղների մրցության ժամանակ սովորություն էր պարտված աշուղը հաղթողին տալիս էր իր քամանչան:<sup>26</sup>

«Չարդ ռաշի կուդէն պիտի» արտահայտության համար Բրյուսովը բացատրում է, թե առասպելական Պեգաս ձիու արձագանքն է: Իր թարգմանության ժամանակ Բրյուսովն օգտագործում է նաև հնացած բառեր:

Օրինակ՝

Струна из **злата** свита будь, резьбой пленяй железо, нас...

Բոլոր դեպքերում բրյուսովյան թարգմանությունը լսողին հաղորդում է հայերեն խաղի ողջ հմայքը: Համեմատենք «Քամանչա» խաղի վերջին տան թարգմանությունը:

Ты всем даешь веселый вид, с тобой опять здоров большой;  
Чуть сладкий зов твой зазвучит, блажен, кто говорит с тобой,  
Проси, да скажут: „Бог продлит – дни нас пленявшего игрой!“  
Доколь жив Саят-Нова, что не узришь ты, каманча!

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 450-451:

<sup>24</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասն հատորով, հ. VII, էջ 219:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>26</sup> *„Поэзия Армении“* с. 257.



## Հայերենը

Շատ տըխտը սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն,  
Յիվ քաղցըր ձայնը վիր կ'օնիս` բաց կու լի հիդըդ խաղողըն.  
Խալխին էս իլթինագն արա` ասին. «Ա՛յրի քու ածողըն»:  
Քանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամա՛նչա:

Բրյուսովը որոշ բառեր չի թարգմանել, գրել է այնպես, ինչպես Սայաթ-Նովայի խաղերում է: Սակայն թարգմանության տողատակում ներկայացրել է այդ բառերի բացատրությունը: Բերենք թարգմանչի մի շարք բացատրություններ.

- 1)Джан – слово, означающее и душу и тело, вообще нечто самое дорогое, милое, любимое.
- 1)Ջան- բառ, հոգի ու մարմին, ընդհանրապես ինչ-որ ամենաթանկագին, սիրելի:
- 2)Пинджан – особый сосуд, пиала.
- 2)Փընջան- հատուկ անոթ, փիալա:
- 3)Пранги атлас – фряжский, заморский атлас.
- 3)Փըռանգի սալա- ֆրանսիական, անդրծովյան մետաքս:
- 4)Конь Раш – конь Рустема из персидской эпопеи.
- 4)Ռաշ ձի- պարսկական էպոսի Ռուստամի ձին:
- 5)Сусамбар - пахучая трава.
- 5)Սուսամբար – հոտավետ խոտ: (Հոտավետ տերևներ ունեցող ցածր բույս):
- 6)Араз – Аракс, река.
- 6) Արազ-Արաքս գետ:
- 7) Саз – народный музыкальный инструмент.
- 7) Սազ - ժողովրդական երաժշտական գործիք:
- 8) Яр – милая.
- 8) Յար – սիրելի:
- 9) Матах тебе – привет, собственно: я готов принести себя в жертву тебе.
- 9) Մատաղ իմ քիզ – ողջույն, մասնավորապես` էս պատրաստ եմ քեզ համար զոհվել:
- 10) Шамам – род дыни, обычное сравнение для женской груди.
- 10) Շամամ – սեխի տեսակ, սովորական համեմատություն կնոջ կրծքի համար:
- 11) Самшит –род сосны, обычное сравнение для рук и стана.
- 11)Շիմշատ – սոճու տեսակ, սովորական համեմատություն ձեռքի և իրանի համար:
- 12) Набат – кристаллы топленного сахара, лакомство.
- 12) Նաբաթ – հալած շաքարի բյուրեղներ, քաղցրավենիք:

Վ. Բրյուսովի թարգմանություններում Սայաթ-Նովայի թիֆլիսահայ բարբառով օգտագործած դարձվածքները, որոնք գրական հայերենով բառացի չեն հասկացվում, ռուսերենով ներկայացված են բառացի:

## Օրինակ՝

«Էրագումըն տեսածի հիդ միզի մե հեսաբ մի անի» տողը Բրյուսովը թարգմանել է.

„Меня за свой вчерашний сон презрительно считать зачем?”.

Պետք է խոստովանել, որ Սայաթ-Նովային թարգմանելը հեշտ չի եղել: Վալերի Բրյուսովի թարգմանած խաղերում երևում է հայ բանաստեղծի և՛ մեծությունը, և՛ նրա բարձր արվեստը: Հովհաննես Թումանյանը մեծ երախտագիտությամբ է լցված Սայաթ-Նովայի խաղերի ռուսերեն թարգմանությունների հեղինակի՝ Վալերի Բրյուսովի նկատմամբ: Եվ կարծես այսօր էլ լսում ենք Թումանյանի սիրով ու երախտագիտությամբ լեցուն խոսքը, որը կարծես „*Поэзия Армении*”-ի 100-ամյա հոբելյանի առթիվ է ասվում. «Չէ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը, շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՛ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Տեսեք ինչքա՛ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՛ն սեր...»:<sup>27</sup>

Հիրավի մեծ տաղանդ, բազմագիտակություն ու դժվարությունները հաղթահարելու հզոր կամք է ունեցել Վալերի Բրյուսովը Սայաթ-Նովայի խաղերը գնահատելիս և նրան համաշխարհային պոեզիայի մեծերի հետ համեմատելիս: Նրա Սայաթ-Նովայի խաղերի թարգմանություններն անզուգական են:

---

<sup>27</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. VII, էջ 471:



## ՌՈՒԶԱՆ ԴՈՒՌԻՒԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### Վ.ԲՐՅՈՒՍՈՎԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ

1916 թվականին Մոսկվայում լույս տեսած „Поэзия Армении” («Հայաստանի քնարերգությունը») ժողովածուն Վալերի Բրյուսովը սկսում է հայ ժողովրդական բանահյուսության գոհարների թարգմանությամբ: Ըստ որում „Поэзия Армении”-ի մեջ ընդգրկված բանահյուսական բոլոր հատվածները ռուսերեն է թարգմանել բացառապես հենց Վալերի Բրյուսովը՝ իր կազմած ժողովածուի թե նախաբանում և թե ծանոթագրություններ բաժնում ներկայացնելով այդ հյուսվածքների գեղարվեստական, ճանաչողական ու պատմական արժեքը: Նա իրավացիորեն նկատում է, թե մինչև 1916 թվականը հայ գիտնականները դեռևս չեն հասցրել ամբողջության մեջ հավաքել ժողովրդական երգերը այն քանակով, ինչքան ունեն լատիշներն ու ֆինները՝ չհաշված առաջատար ժողովուրդներին:<sup>1</sup> Այդ կարևոր գործը շարունակում են առաջ տանել հայ բանահավաք բանասերները և հենց ինքը, երբ 1916-ին Թիֆլիսում էր, եղել է դրա ականատեսը: Բրյուսովը հատուկ ձևով արժևորում է Կարապետ Կոստանյանցի ջանքերը այդ բնագավորում: «Կա հայտնի հին ասացվածք, թե «Ամեն հայ բանաստեղծ է», և այդ ճշմարտությունը հաստատում են ժողովրդական երգարաններն ու տաղարանները»:<sup>2</sup> Համեմատելով հայ ժողովրդական երգերը այլ ազգերի բանահյուսական նման դրսևորումների հետ՝ Բրյուսովը շեշտում է նրանց անգուգական հարստությունն ու նրբագեղությունը, հատկանիշներ, որոնք կարող են կարծել տալ, թե դրանք ուշ շրջանի բանաստեղծի գրածներ են: Նման բնութագիրն, օրինակ, հատուկ չէ սլավոնական ժողովրդական երգերին:<sup>3</sup> Բրյուսովի կարծիքով հայկական ժողովրդական երգերում չկա սկանդինավյան հյուսվածքների խստությունը, որն արդյունք է սառը ծովի և մռայլ երկնքի: Հայկական երգերը շնչում են հարավի ջերմությամբ ու Արևելքի պերճությամբ: Նրանցում երևում է հայ ժողովրդի խոր հասունությունը, որովհետև հայերն իրենց ծննդյան պահից հայտնվել են երկրագնդի քաղաքակիրթ ազգերի շարքում: Հայկական երգերում

<sup>1</sup> „Поэзия Армении с древнейших времен до наших дней”, под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, Москва, 1987, с. 37. Այսուհետև տողատակում կնշենք „Поэзия Армении” - Ռ.Դ.:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 38:

հնարավոր չէ գերմանական ժողովրդական երգի կոպտությունը, որը երբեմն վանում է իր անսքող բացախոսությամբ: Հայերն իրենց կրթված արևելյան հարևաններից փոխառել են մտքի բարեկրթություն և զգացմունքի նրբություն, բայց միաժամանակ նրանց երգերում չկա արևելյան հարևանների չափազանցված զգացմունքայնությունը: Ըստ Բրյուսովի հայ ժողովրդական երգը արևելյան առումով շքեղ է, իսկ արևմտյան կտրվածքով՝ իմաստուն:<sup>4</sup> Ահա այս եզրահանգումը ժողովածուի հեղինակը հաստատում է հայկական բանահյուսական այն երգերով, որոնք իր թարգմանությամբ ընթերցողը կկարդա և կհամոզվի դրանց կատարյալ լինելու մեջ:

Եվ քանի որ „Поэзия Армении” ժողովածուն ինչ-որ առումով յուրօրինակ հուշարձան էր 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած արևմտահայերի ցեղասպանության մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների համար, Բրյուսովն իր գրքի առաջաբանում Հայաստանը տեսնում է պատմական տարածքով. «...այդ բոլոր երգերը հիմա էլ ժողովուրդը երգում է Արարատի սարահարթերում, Արաքսի հովիտներում, վաղնջական Հայաստանի լեռնային գյուղերում և դեռ վերջերս՝ մինչև վերջին ողբերգական օրերը, երգում էր Վանի ափերին»<sup>5</sup>:

„Поэзия Армении” գրքում հեղինակը նշում է, թե ինչ հեղինակներից է քաղել բանահյուսական երգերը: Այդ հեղինակներն են Գարեգին Սրվանձտյանցը, Մկրտիչ Էմինը, Արշակ Չոպանյանը: Հնագույն գողթան երգերը քաղել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», «Ասլան աղա» վիպական տաղը Կարապետ Կոստանյանցի հրատարակությունից, «Մասունցի Դավիթ» էպոսի հատվածը Մանուկ Աբեղյանի գրառումից, որոշ ծիսական երգեր քաղել է Արշակ Չոպանյանի ֆրանսերեն հրատարակությունից՝ դրանց հայերենը ձեռքի տակ չունենալու պատճառով:

Վ.Բրյուսովի ժողովածուի բանահյուսական հատվածը, ինչպես կտեսնենք, ընդգրկում է հայ ժողովրդական բանահյուսության քնարական սեռի տարբեր ժանրերը, որոնց Բրյուսովը կցել է իր մեկնությունները:

Գողթան երգերից Բրյուսովը թարգմանել ու ժողովածուում զետեղել է Վահագնի ծնունդը, ալանների արքայադուստր Սաթենիկի առևանգումը և Վարդգեսի՝ Երվանդ արքայից աղջիկ ուզելը: Այս հատվածները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» քննական բնագրում տողատված չեն:<sup>6</sup> Տողատումն առկա է Ստեփանոս Մալխասյանի աշխարհաբար թարգմանության մեջ, ուր նա զուգադիր բերել է գրաբարն ու աշխարհաբարը:

Վահագնի ծննդյան հատվածի ծանոթագրության մեջ Բրյուսովը մեջբերում է, թե ինչպես այդ հատվածը Խորենացին իր ականջներով է լսել գողթան երգիչներից, որոնք պատմում էին, թե ինչպես է Վահագնը կռվել ու հաղթել վիշապներին: Նա Վահագնին համարում է նաև վրացիների կողմից պաշտվող աստվածություն, ինչպես վկայում է պատմահայրը: Նա տեղյակ է նաև այն փաստերին, որոնք պատմում են Ագաթանգեղոսն ու Անանիա Շիրակացին: Ըստ Ագաթանգեղոսի Վահագն գեղեցկության աստվածուհի Աստղիկի ամուսինն էր: Բրյուսովը նույնիսկ թարգմանում

---

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>5</sup> Նույն տեղում: („...все эти песни поныне поет народ на пласкогорьях под Араратом, в долинах Аракса, в горных деревнях древней Айастан и ещё недавно, до последних трагических дней, пел на побережьях Вана”).

<sup>6</sup> Տ՛ես Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի, Նմանահանություն, Երևան, 1991, էջ 85-86, 179, 199:

է Աստղիկ անունը՝ „Астхик буквально-звёздочка”:<sup>7</sup> Նա տեղյակ է նաև, որ նոր ժամանակներում բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը մշակել է «Վահագնի ծնունդը»: Բերենք մի փոքրիկ հատված բրյուսովյան թարգմանությունից.

Из того огня младенец возник,  
И были его власы из огня,  
Была у него брада из огня,  
И, как солнце, был прекрасен лик.<sup>8</sup>

Չնայած Արտաշես արքային վերաբերող միայն մի հատված կա ժողովածուի բնագրային մասում, սակայն ծանոթագրություններում թարգմանիչը դրել է նաև Սաթենիկի ու Արտաշեսի շքեղ հարսանիքը ներկայացնող երկտողը.

Арташеса на свадьбе шел дождь золотой,  
Сатеник на свадьбе шел дождь жемчугов.<sup>9</sup>

Բրյուսովի կարծիքով Արտաշես արքայի կերպարում հայ բանահյուսները մարմնավորել են Արտաշես անունը կրող մի քանի հայ արքաների՝ այդ թվում Վարթագենի նշանավոր գորավար Հանիբալի ժամանակակից Արտաշես Առաջինին:

Վարդգեսի անվան հետ կապված հայ հին վիպասքի հատվածի թարգմանությունը Բրյուսովը նույնությամբ քաղել է Մ.Էմինից. «...քանի որ նրա արձակ թարգմանությունը ռիթմով համարյա համընկնում է բնագրին»:<sup>10</sup> Բրյուսովին հայտնի են Վաղարշապատի մյուս անունները, որոնք ավելի ուշ ժամանակների հետ են կապվում՝ Նոր քաղաք, Էջմիածին: Նա իրավացիորեն նշում է, թե հատվածի վերջին տողը դժվար թարգմանելի է՝ «Կռել կռփել գդուռն Երուանդայ արքայի»: Խորենացին ինքը բացատրում է, թե Վարդգեսը Երվանդ արքայից նրա քրոջ ձեռքն է խնդրել. «Այս Երվանդը առաջինն է, Սակավակյացը, Հայկագունիներից, որի քրոջը Վարդգեսը կին առնելով՝ այս ավանը շինեց, որտեղ և Արշակունի Տիգրան միջինը նստեցրեց հրեա գերիների կեսը...»:<sup>11</sup>

Հետաքրքիր է, որ Բրյուսովը „Песни о любви” խորագրի տակ որպես ժողովրդական սիրո երգեր է համարել քուչակյան մի քանի հայրեններ: Բերենք դրանցից մեկը և՛ հայերենով, և՛ ռուսերենով.

Քանի՛ ու քանի՛ ասեմ.  
«Ձիմ եարին կապան կարեցեք,  
Արեւն իւր երեսք արեք,

<sup>7</sup> „Поэзия Армении”, с. 494.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 495:

<sup>10</sup> Նույն տեղում („...так как его прозаический перевод почти совпадает с ритмом подлинника”).

<sup>11</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 241:

զլուարնկան աստառ ձեւեցէք.  
Թուխ ամպն այլ բամպաք արէք.  
Ի՛ ի ծաւեն դերձան քաշեցէք.  
Աստղերն այլ կոճակ արէք,  
զիս ի ներս ողկիկ շարեցէք»:<sup>12</sup>

Բրյուսովի ընտիր թարգմանությունն է.

Для милой надо платье шить,  
А тканью солнце может быть,  
Подкладкой платью – лунный свет,  
И лучше тучек – нитек нет,  
Уборы – пена на волнах,  
Застежки – звезды в небесах,  
А ей на грудь цветок – я сам!<sup>13</sup>

Բերելով հայկական ժողովրդական երգերի մի քանի փունջ՝ թարգմանիչը նկատում է, թե որքան թանկ է համարում ժողովուրդը մարդկային զգացմունքը: Նրա կարծիքով ժողովրդի մարդու գեղագիտությունը և սերը իրական կյանքի նկատմամբ մարդու իսկական հաղթանակն է, որովհետև դրանք ներկայացնում են ժողովրդի մարդու հոգու ուժը: Վերոբերյալ սիրերգը հաստատում է հենց ասվածը:

„Поэзия Армении” մեջ ներառված են ծիսական քնարերգության տեսակներ՝ ջանգյուլումներ, հարսանեկան երգեր, սգո երգեր, բնության երգեր, զեյթունցիների քայլերգը: Թարգմանիչը շատ համառոտ ներկայացնում է ջանգյուլումի ծեսը: Չամուսնացած աղջիկները ջրով լի ամանը ողջ գիշերը դնում են վարդի թփի տակ՝ աստղերի լույսի ներքո: Աղջիկները նրա մեջ զգում են իրենց անձը ներկայացնող փոքր նշաններ ու հետո փոքրիկ աղջիկը, որի դեմքը ծածկված է քողով, հանում է նշանները ջանգյուլումի երգերի ներքո, ու որոշում է նշանի տիրոջ բախտը: Ջանգյուլումի երգեր գրառել են Կոմիտասը<sup>14</sup> և Գարեգին Սրվանձտյանցը:<sup>15</sup>

Բրյուսովն իր թարգմանությունները կատարել է Պողոս Մակինցյանի „Очерк армянской литературы” գրքից:<sup>16</sup> Նրա ընտրած բոլոր ջանգյուլումները կենսասեր մարդու զվարթ երգեր են.

Соловей, в мой сад летай,  
Песню яра распевай,  
Твоей песней мой привет  
К дому яра передай.<sup>17</sup>

<sup>12</sup> Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, 1988, էջ 72:

<sup>13</sup> „Поэзия Армении”, с. 97-98.

<sup>14</sup> Տես Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Հազար ու մի խաղ, Երևան, 1969, էջ 16,22,31,82:

<sup>15</sup> Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 260-263:

<sup>16</sup> „Поэзия Армении”, с. 496.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 101:

Ты Араз, меня пойми,  
Говори, язык прими,  
Молви милому: „Скорей  
Ты меня в свой дом возьми”.<sup>18</sup>

Շատ գեղեցիկ նմուշներ է ընտրել Վալերի Բրյուսովը օրորոցային երգերից: Նրանցում հնագույն հավատալիքներին գումարվում է քրիստոնեական հավատը: Երեխային հեռու լեռներից կաթ են բերում ոչխարները, որոնք անուշ կաթով կշտացնում են նրան.

Баю-бай, идут овечки,  
С черных гор подходят к речке,  
Милый сон несут для нас,  
Для твоих, что море глаз,  
Усыпляют милым сном,  
Упоют молоком.

Ահա այս մայրություն անող կենդանիների կողքին հայտնվում են Հիսուս Քրիստոսն ու Աստվածամայրը: Երգի մեջ մայրը խոր հավատով իր երեխային հովանավոր է կարգում եկեղեցու բոլոր սրբերին, նա հավատացած է, որ իր խնդրանքը նրանք կկատարեն ու կպահպանեն իր համար ամենաթանկ էակին՝ երեխային.

Богоматерь-мать твоя,  
Сын ее - хранит тебя.  
В церковь Божию пойду,  
Всех святых я попрошу,  
Чтоб Распятый нас хранил  
И тебя благословил.

Ինչպես շատ ժողովուրդների մոտ, այնպես էլ հայերի, հարսանեկան երգերը դարերի ընթացքում երգվել են: Բանասերները այդ հյուսվածքները կոչում են կենաց ծառի երգեր: Հայկական հարսանեկան երգերում փեսան կոչվում է թագավոր, իսկ հարսը՝ թագուհի: Բնական է, որ ծեսի ժամանակ երկուսին էլ փառաբանում են որպես կատարյալ էակներ՝ գեղեցիկ, իմաստուն, քաջ, շնորհալի, բարի, մարդասեր: Նույնն է նաև այլ ժողովուրդների մոտ: Ահա թե ինչպիսին է ռուսական գյուղի գեղեցկուհու կերպարը.

Опросинья хороша:  
Без подставы высока,

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 106:

Без подвивочки толста,  
Без белилецек бела,  
Без мазилец румяна.<sup>19</sup>

Վ.Բրյուսովն իր թարգմանած հարսանեկան երգի բնագիրը ներկայացնում է կրճատված ձևով: Երգում փեսային՝ թագավորին, հարցնում են, թե նրան ինչ ծաղիկ, այսինքն՝ աղջիկ պետք է բերեն: Երգում թվարկվում են Հայոց աշխարհի բազում ծաղիկներ: Բերենք մի հատված բնագրով և Բրյուսովի թարգմանությամբ.

Թա՛գավոր, ի՞նչ բերեմ քեզ նման, -  
Քո կանաչ արև քեզ նրման.  
Գարնան վարդենիս, որ կրծաղկի,  
Ծաղկեր քո արևուդ նրման:<sup>20</sup>

Царю что дам я, с ним что схоже,  
С его зеленым солнцем схоже?  
Не розу ль дам я, что заблещет,  
Заблещет, с этим солнцем схоже?<sup>21</sup>

Ժողովածուի մեջ հայկական ժողովրդական ծիսական քնարերգությունից նմուշներ են զետեղված սգո երգերից և հմայիլներից: Սգո երգերից բերված օրինակներում տեսնում ենք այրու, որդեկորույս մոր, քրոջ ողբերը՝ ասված հարազատ ննջեցյալների վրա: Հմայիլները, որոնք գալիս են խոր հնությունից, միջնադարում ստացել են քրիստոնեական բովանդակություն: Դրա համար էլ նրանց համար որպես վերնագիր խորագրել է՝ „Религиозные заклинания” («Կրոնական հմայիլներ»): Թարգմանված հմայիլներում հավատացյալ հայ մարդը իր ֆիզիկական գոյության և հոգու համար ապավինում է Հիսուսին, Հին կտակարանի սրբերին: Հայտնի է, թե հնում մարդը որքան ավելի անպաշտպան էր գիշատիչ գազաններից՝ հատկապես գայլերից: Ահա և սուրբ Սարգիսը, Գրիգոր Լուսավորիչը, Աստվածամայրը հիշատակվում են որպես գայլի չար ուժը խափանող: Կա նաև չար աչքից պաշտպանվելու հմայիլ, որում քրիստոնեական եկեղեցու սրբերի շարքում հիշատակվում են Սողոմոն Իմաստունն ու Դավիթ մարգարեն.

Храмом Соломоновым,  
Да жезлом Давидовым,  
Словом Аароновым,  
...Злого глаза нет! Злого шипа нет!  
Сгинь, лихой навет! сгинь лихой совет.<sup>22</sup>

<sup>19</sup> Н.И.Кравцов, С.Г.Лазутик, Русское устное народное творчество, Москва, 1983, с.53.

<sup>20</sup> Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Հազար ու մի խաղ, էջ 112:

<sup>21</sup> „Поэзия Армении”, с. 106.

<sup>22</sup> „Поэзия Армении”, с. 112-113.



Վ.Բրյուսովը թարգմանել է նաև բնության երգեր, որոնց մեջ ընտրված է, իրոք, լավագույնը՝ «Երգ շինականացը», որը գրառել է Գարեգին Սրվանձտյանցը:<sup>23</sup> Նույն երգը «Հազար ու մի խաղ» ժողովածուում տպագրել է նաև Կոմիտասը:<sup>24</sup> Բրյուսովի թարգմանությունը շատ գեղեցիկ է, իր ներգործման ուժով հավասար է հայկական տարբերակին: Տեղին է նույնությամբ բերել երկու տարբերակներն էլ: Միայն անհրաժեշտ է նշել, որ թարգմանիչն իրեն որոշ ազատություն է տվել և ավելացրել է բառեր, որոնք հայերեն բնագրում չկան: Դրանք են՝ **лес** և **чинар**: Միաժամանակ նա փոխել է տաղի մեզ հայտնի վերնագիրը և իրավացիորեն կոչել է „Ноктюри“ («Գիշերերգ»):

### Երգ շինականաց

Լուսնակն անուշ, հովն անուշ,  
Շինականի քունն անուշ.  
Ծագեց լուսնակն երկրնուց,  
Հովըվի փողն էր անուշ:  
Հոտաղն եղներ կ'արածա,  
Մաճկալ պառկեր, քունն անուշ,  
Ջրղզրղուն քամին կը փրչե,  
Ծովային հովն էր անուշ:  
Դաշտեր, ձորեր մընջեր են,  
Ջրեր գլգլան՝ ձենն անուշ,  
Հավքեր թառան ուրենց բոն,  
Բըլբուլի տաղն էր անուշ.  
Անմահական հոտ բուրեր,  
Քաֆուր վարդի հոտն անուշ:<sup>25</sup>

### НОКТЮРИ

Луна нежна, ветер нежен,  
И сон земледелов нежен,  
Луна высоко взошла,  
И голос свирели нежен,  
Пастух распустил быков,  
И сон под чинарой нежен,  
Прохлада веет в листве,  
И ветер приморский нежен,  
По камням ручей журчит

<sup>23</sup> Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, էջ 258:

<sup>24</sup> Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Հազար ու մի խաղ, էջ 9-10:

<sup>25</sup> Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, էջ 258:

И говор струй его нежен,  
Все птички по гнездам спят,  
Но свист соловья так нежен,  
Как сладко пахнет в лесу:  
То запах розы так нежен!<sup>26</sup>

Ժողովածուում տեղ է գտել նաև դարիբի մեկ երգ և «Զեյթունցիների քայլերգը»: Գրքի ծանոթագրություններում ամենաջերմ բնութագրումներ ու փաստեր կան զեյթունցիների ազատատենչության մասին: Զեյթուն անունը կա Կիլիկյան հայկական թագավորության ժամանակագրություններում: XIV դարի վերջին քառորդում հայկական թագավորության անկումից հետո զեյթունցիները չէին կամենում ընդունել օտար իշխողներին: Հայտնի են բազում դեպքեր, երբ զեյթունցիները հանուն իրենց անկախության զենքը ձեռքին կովել են թուրքական բանակի դեմ: Ահա այդ խիզախ ոգու արտահայտությունն է նաև «Զեյթունցիների քայլերգը»: Նրանում կան հետևյալ մարտական տողերը.

Зейтунцы! храбрость-наша честь,  
И к туркам мы лелеем месть.<sup>27</sup>

Առանձին բաժին են կազմում հայ միջնադարյան երգերը, որոնք կամ ժողովրդական են կամ անանուն: Դրանցից է «Լևոնի երգը»: Ծանոթագրություններում տեղեկացվում է, թե „Песнь на пленение короля Левона” («Թագավոր Լևոնի գերության երգը») քաղել է ֆրանսիացի նշանավոր հայագետ Էդուարդ Դյուլորիեի «Հավաքումն իսաչակիրների պատմիչների, հայկական վավերագրեր» գրքից: «Էդ.Դյուլորիեն ասում է, որ Վահրամ Բաբունին, պատմելով եգիպտացիների՝ 1266-ին Կիլիկիայի վրա կատարած հարձակման մասին, հիշատակում է մի տխուր դրվագ՝ Հեթում արքայի որդու՝ Լևոնի գերումը և մյուս որդու՝ Թորոսի սպանությունը: Ահա այս ծանր դեպքերն էլ ներշնչել են ժողովրդական մուսային հորինելու այս երգը, որն առաջին անգամ տպագրել է Ղևոնդ Ալիշանը «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում»:<sup>28</sup> Բրյուսովի կարծիքով «Լևոնի երգը» ժողովուրդը ստեղծել է ազգային հպարտությամբ, որովհետև Լևոնը մերժում է թուրքական սուլթանի առաջարկը՝ դառնալ մահմեդական ու թագավորական տիտղոս ստանալ: Վիպական տաղի կրկնակում շարունակ շեշտվում է Լևոնի քրիստոնյա լինելը.

Наш светоч, Матерь Божия!  
Да Крест Честной хранит – его и нас.<sup>29</sup>

Թարգմանիչը «Լևոնի երգի» խորագրի տակ դրել է նաև պատմական դեպքերի թվականը՝ 1268թ.:

<sup>26</sup> „Поэзия Армении”, с. 114.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>28</sup> Տե՛ս Ա.Դուլորիանյան, Էդուարդ Դյուլորիեն հայագետ, Երևան, 2004, էջ 31:

<sup>29</sup> „Поэзия Армении”, с. 120.

Լևոնը երգում, ըստ հայկական տարբերակի, երեք տարվա գերությունից ազատագրվում է հոր ռազմական միջամտությամբ: Իրականում նրա ազատագրումը իրականանում է դիվանագիտական ճանապարհով: Ի պատասխան Հեթում Ա-ի խնդրագրի՝ ազատ արձակել Լևոն որդուն, Եգիպտոսի ամիրան առաջարկում է թաթարների մոտից ազատ արձակել իր գերի ազգականին: Թավրիզում նստող Հուլադու խանը չի մերժում Հեթում Առաջինի խնդրանքը և տեղի է ունենում գերիների փոխանակում:<sup>30</sup>

Ժողովրդական երգում կարդում ենք.

Вернулся сын Левон,  
Отцом освобожден.<sup>31</sup>

Երգի հայկական տարբերակում Հեթում Առաջինի ռազմական ուժով որդուն ազատելը ներկայացված է հետևյալ ձևով.

Ոնց որ պապան ալ զայն լըսեց,  
Շատ հեծել քաշեց երամով...  
Եկաւ ի սուլթան ելաւ,  
Շատ գետեր էհան յարենէ:<sup>32</sup>

Հայ միջնադարյան ժողովրդական երգերից Բոյուսովը թարգմանել է «Արագիլի երգը», «Մանուկն ու ջուրը» և հորովելը:

Կոմիտասը շատ հորովելներ է գրառել ու մշակել նրանց երաժշտությունը: Այդ երգերը հայ ազնիվ գեղջուկի՝ աշխարհասերի ու աշխատասերի երգեր են: Դրանցում կա այն ճշմարտությունը, թե մարդկային կյանքի նեցուկը, մարդկությանը կերակրողը հողի աշխատավորն է, որը սիրում է իր գործը.

Мы с первой зорькой встаем,  
Идем работать в поля,  
Простую песню поем,  
Сердца свои веселя!<sup>33</sup>

«Մանուկն ու ջուրը» երգը մասնագետները կոչում են մանկական խաղերգ: Այն առաջին անգամ տպագրել է Ղևոնդ Ալիշանը՝ զուգադիր անգլերեն թարգմանությամբ:<sup>34</sup> Երգում ժողովուրդն իմաստուն ձևով մանկանը սովորեցնում է, թե ինչ դեր ունի ջուրը մարդու կյանքում: Նրանով մարդը պահպանում է իր հիգենան, նրանով սնվում են խոտը, ծաղիկը, ծառը: Իսկ ջուրը գալիս է լեռներից, ուր հին ու նոր ձյուն կա: Եվ վերջում երգը վերածվում է սիրո մեղեդու, որովհետև ջուրը գնում է այն աղբյուրը, ուր սիրելի էակը գալիս է ջուր խմելու և ինքը համբուրում է նրան.

<sup>30</sup> Տե՛ս Մ.Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 268:

<sup>31</sup> „Поэзия Армении”, с. 121.

<sup>32</sup> Աս.Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 230:

<sup>33</sup> „Поэзия Армении”, с. 124.

<sup>34</sup> Տե՛ս Ղ.Ալիշան, Հայոց երգ ռամկականք, Վենետիկ, 1852, էջ 63-65:

Դեմ գամ գրունչըն պագնեմ,  
Ապա սիրովըն յագենամ:<sup>35</sup>

Բրյուսովի թարգմանության մեջ կարդում ենք.

Там воду пьет она, а я,  
Пока она твердит „люблю”,  
Её уста волной люблю!<sup>36</sup>

Ղ.Ալիշանի «Հայոց երգ ռամկականքի» մեջ է տպագրված նաև «Երգ արագիլի» հյուսվածքը:  
Արագիլը Հայոց աշխարհի չվող թռչուններից է. այն իր բույնը հյուսում է գյուղացու տան մոտ գտնվող բարձր ծառերի կատարին՝ հացի, բարդի: Արագիլը քրիստոնեական կրոնում համարվում է սուրբ թռչուն, որովհետև երբեք չի լքում ծերացած ծնողներին և խնամում է նրանց մինչև վերջին շունչը:<sup>37</sup> «Արագիլը երկար ժամանակով եղել է խորհրդանիշ՝ արտահայտող երեխաների նկատմամբ ունեցած հատուկ սիրո և կապվածության»:<sup>38</sup> Հայկական «Արագիլի երգի» մեջ գյուղացին խնդրում է, որ այդ բարի թռչունը իր տան մոտ հյուսի բույնը, որովհետև նրան համարում է իր հարազատը.

Милый аист, к нам спустись,  
К нам на кровлю опустись,  
В нашем доме поселись,  
Свей на ясени гнездо.<sup>39</sup>

„Поэзия Армении” գրքի մի բաժինը խորագրված է „Эпос”: Այդ վերնագրի տակ զետեղված են «Ասլան աղա» („Владыка Аслан”) և «Մասունցի Դավիթ» („Давид Сасунский”) գործերը: Առաջինը թարգմանիչը կոչել է հեքիաթ („сказка”), երկրորդը՝ էպոս („народная эпопея”):

Երկուսին էլ կցել է պատշաճող ծանոթագրություններ: Բրյուսովը տեղեկացնում է, թե ըստ Մովսես Խորենացու և Գրիգոր Մագիստրոսի, հայերը հեթանոսական շրջանում ունեցել են ազգային վեպ (էպոս), որոնց բանաստեղծական հատվածները կան գողթան երգերում: Նա իրավացիորեն նկատում է, թե հայերի երկրորդ՝ «Մասունցի Դավիթ» էպոսը, որը ստեղծվել է քրիստոնեական ժամանակներում, ինչ-որ չափով սնվել է հայ հին վեպից: Դրա համար էլ հայ հին վեպի մասին խոսելիս, չպետք է մոռանալ, որ այն քիչ հատվածները, որ հասել են, եղել են երբեմնի փառահեղ ամբողջության մասեր:<sup>40</sup>

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>36</sup> „Поэзия Армении”, с. 123.

<sup>37</sup> Տե՛ս «Բառարան սուրբ գրոց», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 60:

<sup>38</sup> „Аист долгое время был выразительной эмблемой любви и признательности к детям” (Տե՛ս „Библейская энциклопедия”, Москва, 1891, с.31.)

<sup>39</sup> „Поэзия Армении”, с. 121.

<sup>40</sup> „Поэзия Армении”, с.497.

«Ասլան աղա» վիպական տաղը Բրյուսովը համարում է համընդհանուր արիական ծագում ունեցող, որի հիմքը հավատարիմ կնոջ առասպելն է, որում կինը կյանքը կամովին զոհաբերում է՝ հանուն ամուսնու կենդանի մնալու: Նա մատնացույց է անում հելլենական այն առասպելը, ըստ որի թեսսալական հերոս՝ Փերեի թագավոր Ադմետոսի կինը՝ Ալկեստիսը, զոհում է իր կյանքը: Նա համաձայնվում է ամուսնու փոխարեն իջնել Աիդ, և Ադմետոսը ողջ է մնում: Հերակլեսը կարողանում է Աիդից ազատել Ալկեստիսին և վերադարձնել նրան Ադմետոսին: Առասպելի նյութի հիման վրա գրվել է Եվրիպիդեսի «Ալկեստիսը»:<sup>41</sup> Բրյուսովի կարծիքով նման երջանիկ ավարտ ունի նաև «Ասլան աղան», որում, երբ Ասլան աղայի ծնողները հրաժարվում են մեռնել իրենց որդու փոխարեն, նրա երիտասարդ կինն ինքնակամ առաջարկում է իր կյանքը, սակայն Աստծու կամքով մեռնում են ծնողները, Ասլան աղան ու իր կինն ապրում են երկար ու երջանիկ.

Говорит Господь: „Поди и возьми  
Душу отца и матери тоже,  
А супруги пускай двести лет живут  
Да счастливую жизнь на свете ведут”.<sup>42</sup>

Հովսեփ Օրբելին, որը 1911 թվականին Մոկսում գրառել է «Ասլան աղա» վիպական տաղը, նշում է, թե նրա բովանդակության մեջ աշխարհագրական վայրի նշում չկա, և այն կապ չունի Հայաստանի որևէ վայրի հետ, սակայն բանահյուսության ու գրականության մեջ ստեղծման վայրը համարվում է Մոկսը:<sup>43</sup> Նա Ասլան Աղայի կնոջ անձնագոհությունը և անսահման սերը ամուսնու նկատմամբ համեմատում է «Մասնա ծոեր» էպոսի փոքր Մհերի կնոջ՝ Գոհարի վարքագծի հետ:<sup>44</sup>

«Մասունցի Դավիթ» հայ հերոսական էպոսի բնագիրը Բրյուսովը քաղել է Մանուկ Աբեղյանի գրառած տարբերակից: «Վեպի առաջին պատումի հայտնաբերումից տասներեք տարի անց՝ 1886թ. հունվարին, Մանուկ Աբեղյանը էջմիածնում, Մոկսց Գինեկանց գյուղացի Նահապետից գրի է առնում վեպի երկրորդ պատումը, որը 1889թ. հրատարակվում է Շուշիում՝ «Դավիթ և Մհեր, ժողովրդական դյուցազնական վեպ» վերնագրով:<sup>45</sup>

Բրյուսովը նշում է, թե մինչև Լենկ Թեմուրի Հայաստան կատարած արշավանքները Հայաստանի որոշ նախարարական տներ պահպանել էին իրենց անկախությունը: Դրանցից էին Սյունիքը, Խաչենը, Մասունը: Չնայած «Մասունցի Դավիթ» էպոսը ձևավորվել է Հայաստանի քրիստոնեական ժամանակներում, սակայն, Բրյուսովի կարծիքով, նրանում կան խոր հնության հետքեր:

„Поэзия Армении” գրքի նախաբանում Բրյուսովը հիացմունքով է խոսում հայկական հերոսական էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի մասին, որը հայ ժողովրդի իդեալների մարմնացումն է: Նա անասելի ուժեղ է, անվախ ու քաջ, խորապես ողջամիտ, անսահման ազնիվ

<sup>41</sup> «Դիցաբանական բառարան», թարգմ. Ս.Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 4-5:

<sup>42</sup> „Поэзия Армении”, с. 134.

<sup>43</sup> И.А.Орбели, Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002, с. 27.

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>45</sup> «Մասնա ծոեր», Աշխատությանը Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977, էջ 620:

և միշտ ճշմարտացի: Սակայն ժողովուրդը կերտել է կենդանի կերպար, և Դավիթը զերծ չէ թերություններից. երբեմն դյուրահավատ է, որի պատճառով տուժում է: Նա նույնիսկ ունի որոշ լեզվական թերություններ: Նույնկերպ բնական ու կենդանի են պատկերված էպոսի մյուս հերոսները՝ Ձենով Օհանը, Մսրա Մելիքը: Համեմատելով Դավիթին պարսկական էպոսի գլխավոր հերոս Ռուստոմի հետ, Բրյուսովը միաժամանակ նկատում է, թե հայ ասացողները Դավիթին օժտել են ավելի բնական գծերով:

Բրյուսովի թարգմանած էպոսի հատվածը ավարտվում է Մսրա Մելիքի մահով.

Мысрамэлик сказал: - Еще я тут.

Но Давид в ответ: „Ты всем телом тряхни”.

Мысрамэлик тогда всем телом тряхнул,

На две части он развалился весь:

Половина-там, половина-здесь.

Прекратилась так Мысрамэлика жизнь.<sup>46</sup>

Ինչպես պարզ երևում է Վալերի Բրյուսովը „Поэзия Армении” ժողովածուում ռուսերենով ներկայացրել է հայ ժողովրդական բանահյուսության գանձարանի հիանալի նմուշներ, որոնց թարգմանությունը կատարել է վարպետորեն և դրանք մեկնաբանել է գիտականորեն:

---

<sup>46</sup> „Поэзия Армении”, с. 152.



## ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ „ՊՕՅՆԻՅԱ ԱՐՄԵՆԻԻ” ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵՁ

Վաղուց արդեն հայտնի ճշմարտություն է, թե հայ միջնադարյան բանաստեղծության մասին խոսելիս անպայման ելակետային են այն գնահատականները, որոնք ռուս նշանավոր բանաստեղծ Վալերի Բրյուսովը տվել է միջնադարի հայ բանաստեղծներին իր կազմած „Поэзия Армении” ժողովածուի առաջաբանում և գրքին կցված ծանոթագրություններում:

Բրյուսովյան գնահատականները հիմնավորված են. նա հայ միջնադարյան բանաստեղծներին գնահատում է անտիկ շրջանի և միջնադարյան եվրոպական, Վերածննդի ու նոր ժամանակների քերթողների ստեղծագործությունների համեմատությունների տեսադաշտում: Նման գուգադրական լայն շառավիղը առավել տեսանելի է դարձնում հայ միջնադարի բանաստեղծների գրական արժեքը:

Վ.Բրյուսովի կարծիքով հայ միջնադարյան քնարերգությունը շատ բարձրարժեք է և լիովին ինքնուրույն. „Лирика армянского средневековья есть высшее и наиболее самостоятельное создание армянского народа в области поэтического творчества”.<sup>1</sup>

Բրյուսովն ապացուցում է, որ հայ միջնադարյան քնարերգությունը ոչ մի կապ չունի եվրոպական բանաստեղծության հետ, որը տասներեքից տասնչորսերորդ դարերում նոր-նոր ստեղծվում էր. դրանում բացառություն չէր անգամ առաջադեմ Իտալիան: Ճիշտ է նաև այն կարծիքը, թե հայ միջնադարյան քնարերգությունը գրեթե չի կրել արևելյան պոեզիայի ազդեցությունը: Ռուս մեծ գրողի կարծիքով հայ միջնադարյան քնարերգությունը փայլում է ծիածանի բոլոր գույներով, իր մեջ ունի բոլոր թանկարժեք քարերի փայլը, բուրումնավետ է ինչպես դաշտային ծաղիկներն ու ամենանրբին բույրերը, խոխոջում է մերթ որպես անտառային գետակ, մերթ դրդում որպես լեռնային հեղեղ: Նրանում հնչում են և՛ սիրո քաղցր խոսքեր, և՛ այրող կրքի խոստովանություններ, բայց ամենը խիստ չափի մեջ: Նա հայ միջնադարյան քնարերգությունն անվանում է «հայկական ոգու իսկական հաղթանակը համաշխարհային պատմության մեջ».

„Сияющая всеми семью цветами радуги, переливающаяся блеском всех драгоценных камней, благоуханная, как полевые цветы и как нежные ароматы, то лепечущая, как лесной ручей, то рокочущая, как горный поток, знающая усладительные слова нежной любви и обжигающие речи торжествующей страсти, всегда стройная, гармоничная, умеющая подчинить части общему за-

<sup>1</sup> „Поэзия Армении” с древнейших времен до наших дней”, Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсов, Москва, 1987, с. 47. Այսուհետև այս գիրքը կնշենք „Поэзия Армении”.

мыслу,- средневековая армянская лирика есть истинное торжество армянского духа во всемирной истории”.<sup>2</sup>

Առանց այս եզրահանգման ծանոթացմանը անհնար է աշակերտի մեջ սեր առաջացնել դեպի հայ միջնադարյան բանաստեղծությունը:

Հին, այսինքն՝ խորհրդային դպրոցում, երբ ես հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի էի, ութերորդ դասարանի հայ գրականությանն հատկացված ժամաքանակն ավելի մեծ էր, և ծրագրային էին համարվում այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք էին Ներսես Շնորհալին, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին: Այս հեղինակներին անցնելիս մշտապես օգտագործել եմ „Поэзия Армении” ժողովածուում նրանց տրված բյուսուվյան գնահատականները:

Այժմ ավագ դպրոցի տասներորդ դասարանում հայ միջնադարյան գրականությանը տրվում է ընդամենը քսանհինգ դասաժամ, իսկ վերոհիշյալ երեք բանաստեղծների մասին ակնարկային մեկ ժամ է տրվում՝ «Հայ միջնադարյան քնարերգության ընդհանուր բնութագիրը» վերնագրով:<sup>3</sup> Սա դեռ հումանիտար հոսքի համար:<sup>4</sup> Բայց հոգ չէ, ուսուցչի անելիքում „Поэзия Армении” գիրքն իր դերն ունի:

Միջնադարյան հայ բանաստեղծներից ծրագրային են համարվում Գրիգոր Նարեկացին, Ֆրիկը, Նահապետ Քուչակը և Սայաթ-Նովան: Բոլոր այս բանաստեղծների մասին Վալերի Բյուսուվը խոսել է, ավելին, ողջ միջնադարյան հայ քնարերգության քերթվածները թարգմանել է հենց ինքը, բացառյալ Նահապետ Քուչակի մի քանի հայրեններից, որոնք բացի իր թարգմանածից ներկայացված են Ֆ.Սոլոգուբի և Ս.Շերվինսկու թարգմանությամբ:

Ինչու եմ կարևորում „Поэзия Армении” ժողովածուն հենց ռուսերենով հայ աշակերտին ներկայացնելը: Սա մի հիանալի միջոց է միջառարկայական կապ ստեղծելու, որի ընթացքում շահեկան իրողությունը օգտակար է երկուստեք: Նախ հարստացվում է հայ գրականության ուսուցչի ասելիքը, և երկրորդ՝ աշակերտը ռուսերենի բառապաշարն է հարստացնում, ծանոթանում է ռուս մեծ գրողին ու նրա կատարածին: Կա միջառարկայական ևս մի կապ: „Поэзия Армении” ժողովածուն կապվում է նաև հայ ժողովրդի պատմության հետ: Ավագ դպրոցի աշակերտը բավականին հասուն տարիքում է և որոշ գիտելիքներ ունի հայ ժողովրդի պատմությունից: Բյուսուվը նախքան հայ միջնադարյան քնարերգությանը բնութագրական տալը, խոսում է հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին: Բյուսուվի կարծիքով հազարամյակների ընթացքում Հայաստանը կանգնած է եղել Եվրոպայի ու Ասիայի սահմանագծում՝ երկու տարբեր աշխարհներ, որոնք շարունակ բախվել են, և Հայաստանի ճակատագիրը կապված է եղել այդ բախումների հետ. „Армения-авангард Европы в Азии” («Հայաստանը Եվրոպայի առաջընթացն է Ասիայում») այս ձևակերպումը վաղուց ընդունված է միջազգային պատմագրության մեջ, և Հայաստանի դերն է եղել սինթեզել, միացնել Արևելքը Արևմուտքի հետ:<sup>5</sup> Բյուսուվը խոսում է Տիգրան Մեծի ստեղծած մեծ կայսրության մասին, որի սահմանները ձգվում էին մինչև

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Տողանյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար, Երևան, 2012, էջ 76:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>5</sup> „Поэзия Армении”, с. 23.



Միջերկրական ծով, մինչև Հորդանան ու Հրեաստան, մինչև Սև ու Կասպից ծովերը:<sup>6</sup> Տիգրան Մեծի ժամանակ նրա բանակները հաղթել են անգամ աշխարհակալ Հռոմին: Այդ մասին գրված է նաև աշխարհի հանրագիտարաններում:<sup>7</sup> Բրյուսովը նշում է, թե ինչպես 301 թվականին Տրդատ Մեծը Հռոմի թույլտվությամբ առաջինն ամբողջ աշխարհում քրիստոնեությունը դարձնում է իր երկրի պաշտոնական կրոնը: Հինգերորդ դարի սկզբին՝ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենից հետո, Հայաստանում ծաղկման է հասնում հայ գրականությունը, ստեղծվում է նաև հարուստ թարգմանական գրականություն: Հայերը հունարենից թարգմանում են ահռելի քանակի գրքեր՝ փիլիսոփայությունից, աստվածաբանությունից, հռետորական արվեստից, պատմագրությունից, քերականությունից, յոթերորդ դարից սկսած՝ մաթեմատիկայից, աստղագիտությունից, բժշկությունից, աշխարհագրությունից, և այլն:<sup>8</sup>

Հայաստանի պետականության անկումից հետո հայերը 451 թվականին Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբում են՝ հանուն ազգային անկախության: Հայերի մաքառումները արաբական խալիֆաթի դեմ պսակվում են հաջողությամբ, և 885 թվականին Մեծ Հայքում Բագրատունիները վերականգնում են իրենց թագավորությունը, որի Անի մայրաքաղաքը դառնում է շատ նշանավոր: Նա խոսում է նաև Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Երկրորդի սպանության մասին (1079թ.): Բրյուսովը նշում է, թե ինչ աղետալի նշանակություն են ունեցել Հայաստանի համար տասնմեկերորդ դարում սկսված թուրք-սելջուկյան արշավանքները: Սակայն հայերն իրենց ինքնուրույն պետականությունը նորից են վերականգնում՝ այս անգամ արդեն Կիլիկիայում: Եվ Կիլիկյան հայկական թագավորությունը գոյություն է ունեցել 1080-ից մինչև 1375 թվականը: Հայաստանում դրանից հետո էլ եղել են փոքրիկ կիսանկախ հայկական պետություններ: Մոնղոլների, Օսմանյան թուրքերի հարձակումների հետևանքով հայերը սկսում են ցրվել Եվրոպայի տարբեր երկրներում և հիմնել իրենց գաղթօջախները՝ Վենետիկում, Ամստերդամում, Փարիզում և այլուր:

Տասնիններորդ դարասկզբին Հայաստանի որոշ նահանգներ անցնում են ռուսական տիրապետության տակ, և դա նպաստում է նրանց տնտեսության ու մշակույթի զարգացմանը: Ահա այս սխեմատիկ ակնարկով Բրյուսովն ուզում է ներկայացնել, թե ինչու հայ միջնադարյան քնարերգությունը հայ ժողովրդի հոգու ձայնն է:<sup>9</sup>

Հայ միջնադարյան քնարերգության բաժինը Վ. Բրյուսովը սկսում է Մեսրոպ Մաշտոցի, Հովհան Մանդակունու և Կոմիտաս կաթողիկոսի մի քանի շարականներով: Դրանից հետո թարգմանաբար ներկայացնում է Գրիգոր Նարեկացու երկու տաղերը.

1) „Алмазная роза”

1) «Տաղ Վարդավառին, ի Գրիգորե Նարեկացուն»

2) „Песень на Воскресенье Христовой”

2) «Տաղ Յարութեան, Գրիգորե Նարեկացուն ասացեալ»:

Առաջաբանում Վ.Բրյուսովը ներկայացնում է Գր.Նարեկացու որոշ կենսագրական տվյալներ: Գր.Նարեկացին ստեղծագործել է Բագրատունիների թագավորության ժամանակ,

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>7</sup> Sté u Nouveau petit Larousse illustré, dictionnaire encyclopédique, Paris, 1932, p. 1711.

<sup>8</sup> „Поэзия Армении”, с. 31 .

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 36:

նշանավոր մատենագիր և աստվածաբան Խոսրով Անձևացու որդին էր: Գրել է ն' արձակ, ն' չափածո՝ աստվածաբանական գործեր, տաղեր, ճառեր և մեկնություններ Աստվածաշնչի մոտիվներով: Գր. Նարեկացին հայերի համար պաշտամունքի առարկա է եղել թե՛ իր ապրած օրերին, թե՛ դարեր անց: Հայ ժողովուրդը պաշտամունք ունի Նարեկացու գրած աղոթագրքի նկատմամբ, որը պարզապես անվանում է «Նարեկ»:<sup>10</sup> Վ. Բրյուսովը նկատում է, որ Գր. Նարեկացին կատարելության է հասցրել հայ բանաստեղծության պոետիկան, և այն գերազանց է նույնիսկ պարսկական և արաբական նշանավոր բանաստեղծներից: Նա փաստում է, թե հետագա հայ բոլոր բանաստեղծները Գր. Նարեկացու դպրոցից են դուրս եկել, ու նրա քնարերգությունը ներգործում է նաև ժամանակակից հայ բանաստեղծների վրա:

Տեղին է, որ ավագ դպրոցի ուսուցիչը ծանոթացնի աշակերտներին, թե հետագայում ինչ զարգացումներ է ունեցել նարեկագիտությունը Ռուսաստանում:

Նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը համարում է անթարգմանելի, որովհետև դժվար է գտնել բառապաշարի այն հարստությունը, որն ունի Նարեկացու երկը. „Григорий Нарекский непереволим, его основное творение... невосприемлемо для тех, кто не имел возможности узреть входящую в бездну глубину бесконечно напластованных словарных богатств древнеармянской литературной речи, ее бесконечных звуковых переливов. Оно невосприемлемо для тех, кто не имел счастья осознать или непосредственно постичь красоты скал безлесных гор Армении, зовущих и общению с нагорным поднебесьем...”<sup>11</sup>

1974 թվականին Երևանում գրականագետ Լևոն Մկրտչյանի առաջաբանով լույս է տեսել Գրիգոր Նարեկացուն նվիրված նախկին Խորհրդային Միության գրողների ու գրականության ներկայացուցիչների հողվածների ժողովածու: Նրանում, ի թիվս տարբեր ազգերի գրողներ Մաքսիմ Գորկի, Լև Օզերովի, Կայսին Կուլինի և շատերի, կա նաև լիտվացի նշանավոր բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի հրաշալի հողվածը Գր. Նարեկացու մասին: Հողվածը կոչվում է „Тревожный как Бахов хорал” («Խռովահույզ, ինչպես Բախի բազմաձայն օրհներգը»): Այս հողվածում Մեժելայտիսն ասում է, թե «Նարեկացին համաշխարհային գրականության փիլիսոփայական ուղղության հետաքրքիր բանաստեղծներից մեկն է („Нарекаци, один из интереснейших поэтов философского направления в мировой литературе...”)<sup>12</sup>:

Գրիգոր Նարեկացու հանճարեղ գլուխգործոցը՝ «Մատյան ողբերգության» երկը, մի քանի անգամ թարգմանվել է ռուսերեն: 1988 թվականին Մոսկվայում հրատարակված թարգմանության առաջաբանը գրել է նշանավոր բյուզանդագետ ու միջնադարագետ Սերգեյ Ավերինցևը: Նրա կարծիքով «Նարեկացու քնարերգությունը հավաստիացնում է ինչպես հայկական հին մշակույթի ինքնատիպությունը, նույնպես Գրիգորի բանաստեղծական հանճարի անկրկնելիությունը, („Поэзия Нарекаци удостоверяет как своеобразие древнеармянской культуры, как и неповторимость поэтического гения самого Григора”)<sup>13</sup>:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>11</sup> Григор Нарекаци, Книга скорби, Ереван, 1977, с. 476.

<sup>12</sup> „Читая Нарекаци”, Ереван, 1974, с. 26-27.

<sup>13</sup> Григор Нарекаци, Книга скорбных песнопений, Перевод с древнеармянского и комментарий М.О.Дарбинян и Л.А.Ханларян, Вступительная статья С.С.Аверенцева, Москва, 1988,с.16.

Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին բաղաձայնությի հրաշալի վարպետ է: Վարդավառին նվիրված տաղում շ տառի կրկնությունը տաղին հաղորդում է արտակարգ երաժշտականություն.

**Շուշանըն շաղով լցեալ,**

**Շող շաղով եւ շար մարգարտով.**

Ծաղկունքդ ամեն շաղ առին,

**Շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգակնէն:<sup>14</sup>**

Անշուշտ շատ դժվար է պահպանել նույնատիպ բաղաձայնությո՞ր թարգմանության ժամանակ: Սակայն Վալերի Բրյուսովը թարգմանության վարպետ է, և նա տաղի իր թարգմանական տարբերակում բաղաձայնությո՞ր փոխել է հետաքրքիր կրկնակներով (ռեֆրեններով): Նա կրկնում է բանաստեղծական տան առաջին և չորրորդ տողերում նույն բառը, ինչպես նաև երկրորդ և երրորդ տողերում ևս կան միևնույն բառի կրկնություններ: Ընդգծում ենք բրյուսովյան թարգմանության այդ կրկնակները.

**Росой и красой жемчугов**

**Покрылась лилея в долу,**

**Цветы оросились в долу**

**Росой с золотых облаков.<sup>15</sup>**

Բնականաբար ավագ դպրոցի հայ գրականության ուսուցիչը պարտավոր է գրականության տեսության հարցերը զուգորդել տարբեր թեմաների ուսուցման ժամանակ: Գրիգոր Նարեկացու ծրագրային տաղերն անցնելիս հարմար է անդրադառնալ այնպիսի գրականագիտական հասկացությունների՝ ինչպիսիք են բաղաձայնությո՞ն ու կրկնակը: Հատկապես «Մատյան ողբերգության» երկի տարբեր հատվածներում կրկնակներն առատորեն սփռված են:

Հայ միջնադարյան բանաստեղծությունը ներկայացնող ակնարկային դասի ժամանակ անհրաժեշտ է անդրադարձ կատարել տասներկուերորդ դարի նշանավոր բանաստեղծ Ներսես Շնորհալուն, որը Գրիգոր Նարեկացուց հետո երկրորդ մեծ նորարարն էր հայ պոեզիայում:

Ներսես Շնորհալուց Բրյուսովը զետեղել է բանաստեղծի հռչակավոր պատմական երկը՝ «Ողբ Եղեսիոյ»-ն, որը լի է նորություններով: Առաջին հերթին այն դիմառնություն է, այսինքն՝ Եղեսիա քաղաքը անձնավորված է որպես որդեկորույս մայր: Ներսես Շնորհալին իր ծավալուն չափածո երկի ամեն մի տողն ավարտում է **ին** վերջավորությամբ.

**Իբր ատամունքն վարագին**

**բանիւ զիրեարըս սրէին:**

**Քաջալերէր հայրն գորդին,**

**որդիքն ի մարտ պատրաստէին:<sup>16</sup>**

<sup>14</sup> Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Երևան, 1981, էջ 118-119:

<sup>15</sup> „Поэзия Армении”, с. 162.

<sup>16</sup> Ներսես Շնորհալի, Երգեր, Եղեսիայի ողբը, Երևան, 1982, էջ 113:

Վ.Բրյուսովն իր թարգմանության յուրաքանչյուր տողն ավարտում է միակերպ՝ օյ հանգով.

Так сына звал отец родной,  
А сын готовил меч стальной,  
Призыв на битву, словно вой,  
Гудел в домах, над мостовой.<sup>17</sup>

Ակնարկային դասի մեջ է մտնում Կոստանդին Երզնկացին, որը տասնչորսերորդ դարի բանաստեղծ է և դարձյալ նորարար. նա հայ միջնադարյան քնարերգության առաջին մեծ սիրերգակն է, այլաբանական քերթվածների եզակի հեղինակ, որը շարունակ զգուշացնում է, թե ինքն առակախոսում է ու երբ փառաբանում է լույսն ու արեգակը, ապա ի նկատի ունի Արարչին՝ Հիսուս Քրիստոսին:

Բրյուսովն ասում է, թե Կոստանդին Երզնկացու քնարերգությունը հայ միջնադարում զբաղեցնում է շատ պատվավոր տեղ: Նա իրավացիորեն նկատում է. «Հայ միջնադարյան քնարերգուների մեջ Կոստանտին Երզնկացին առաջինն էր, որ անդրադարձավ սիրո մոտիվին, որը հետո դարձավ հայկական պոեզիայի գլխավոր թեմաներից մեկը» („Среди армянских средневековых лириков Константин Ерзынкайский был и первым, кто коснулся мотивов любви, ставших затем одной из господствующих тем армянской поэзии”)<sup>18</sup>:

Կոստանտին Երզնկացին իր տաղերը գրել է ժամանակի խոսակցական լեզվով, ու դրանք ինչ-որ առումով իր ժամանակի կյանքի արտացոլքն են: Բրյուսովը Երզնկացուց թարգմանել է միայն մի տաղ՝ այն անվանելով «Գարուն»: Իրականում այդ տաղի այլաբանական լինելու փաստը հենց ընդգծում է Վ. Երզնկացին տաղի վերնագրում՝ «Բան գարնան օրինակալ խորհուրդ ի Քրիստոս. մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգեւոր»: Բրյուսովն այնքան հիացած է Վ. Երզնկացու այս տաղով, որ համոզված է, թե այն պատիվ կբերեր նույն դարի Արևմտյան Եվրոպայի ցանկացած գրականության, իսկ Եվրոպան նույնիսկ նման հակադրություն չուներ: Թարգմանչի կարծիքով իր հզոր շնչով Վ. Երզնկացու բանաստեղծությունը պատկանում է Մեծ Վերածննդին. „По силе, по энергии стиха и языка, поэма сделала бы честь любой литературе Западной Европы того века, и Европе даже нечего противопоставить”<sup>19</sup>:

Գրականագետ Լևոն Մկրտչյանը 1981 թվականին հրատարակում է Վ. Երզնկացու տաղերը երկու լեզվով՝ հայերեն ու ռուսերեն: «Գարուն» բանաստեղծությունը նա ներառել է Վ.Բրյուսովի ընտիր թարգմանությամբ: Ահա բանաստեղծության մի քառատողը բնագրով ու բրյուսովյան թարգմանությամբ.

Է հարսանիք տիեզերաց,  
Է ցրնծութիւն պըտղաբերաց.  
Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց,

<sup>17</sup> „Поэзия Армении”, с. 174.

<sup>18</sup> „Поэзия Армении”, с. 50.

<sup>19</sup> Նույն տեղում:

Ծաղկունք գերկիր են զարդարել:<sup>20</sup>

Мир весело праздновать свадьбу готов:

Веселье во всем для плодовых дерев,

Цветами всех красок и разных родов

Раскрашены дали полей и лугов.<sup>21</sup>

Ակնարկային դասի ժամանակ տեղին է ընդգրկել ևս մեկ միջնադարյան բանաստեղծի՝ Հովհաննես Թլկուրանցուն, որին Վ. Բրյուսովը այնպես է բնութագրում, որ նման գնահատականը պատիվ կբերեր ցանկացած մեծ բանաստեղծի: Նա տասնհինգերորդ դարի հայ բանաստեղծի սիրո երգերում տեսնում է այնպիսի խոստովանություններ, որոնք լիովին նորություն էին համաշխարհային գրականության մեջ: Բրյուսովը գրում է. «Իսկական զգացմունքի այդպիսի ճիշեր չկան ո՛չ Պետրարկայի<sup>22</sup> սոնետներում, որը ապրել է մի դար առաջ, ո՛չ էլ Ռոնսարի<sup>23</sup> սիրային երգերում, որ գրել է, հավանաբար, մի դար հետո: Հովհաննեսի տաղը... վերջանում է հաշտվողական ակորդով: Բայց դա չէ կարևորը. կարևորն այն է, որ բանաստեղծը գտել է այնպիսի խոստովանություններ («Ձսիրտս երեցիր» և այլն), որոնք լիովին հասկանալի դարձան միայն մեր օրերում, այն բանից հետո, երբ իրենց հայտնագործություններն արեցին և՛ Ալֆրեդ դը Մյուսեն<sup>24</sup>, և՛ Հայնեն<sup>25</sup>, և՛ Բոդլերը<sup>26</sup>...»:<sup>27</sup> Տողատակում բերում ենք համառոտ տեղեկանք համաշխարհային գրականության այն մեծությունների մասին, որոնց քերթվածների հետ Վ. Բրյուսովը համեմատել է Հովհաննես Թլկուրանցու սիրո տաղերը:

Միջնադարյան հայ տաղերգուներից ավագ դպրոցում ծրագրային է Ֆրիկը, որից Բրյուսովը թարգմանել է «Գանգատ» (հատված) և «Ընդդեմ ֆալաքին» հետևյալ վերնագրերով՝ 1) „Жалобы” (Отрывок), 2) „Калесо Судьбы”.

Ֆրիկին նա համարում է ազատամիտ բանաստեղծ, որը հայ բանաստեղծություն է բերում անկաշկանդ քննադատությունը, վեր բարձրացնում իր ապրած ժամանակաշրջանի ցավոտ խնդիրները. «Ֆրիկն իր բանաստեղծություններում խոսում է այն ամենի մասին, ինչ տեսել է իր աչքերով, որպես անմիջական դիտորդ՝ իր դարի, իր ժամանակի, իր օրերի իրա-

<sup>20</sup> Կոնստանտին Երզնկացի, Լոյսն առաւօտուն, Երևան, 1981, էջ 134:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 135: „Поэзия Армении”, с. 192.

<sup>22</sup> Պետրարկա (1304-1374)-իտալացի բանաստեղծ և գիտնական: Նրան փառք են բերել իտալերենով գրված բանաստեղծությունները, որոնցում պատկերված է բանաստեղծի սերը Լատուրայի նկատմամբ:

<sup>23</sup> Պիեռ Ռոնսար (1525-1585)-ֆրանսիացի բանաստեղծ: Գրել է սիրո սոնետներ: Եղել է տասնվեցերորդ դարի ֆրանսիական բանաստեղծների հիմնած պլեադայի պարագլուխը: Այդ խմբի նպատակն էր՝ ստեղծել ֆրանսիական նոր բանաստեղծություն:

<sup>24</sup> Ալֆրեդ դը Մյուսե (1810-1857)-ֆրանսիացի քնարերգու և դրամատուրգ: Հայտնի է տվյալտանքներով լի սիրո երգերով:

<sup>25</sup> Հենրիխ Հայնե (1797-1856)-գերմանացի բանաստեղծ և գրաքննադատ: Հայնեն իր պոեզիայով վայելել է համաշխարհային հռչակ: Նրա գործերով ներշնչվել են նշանավոր կոմպոզիտորներ Շուբերտը, Շումանը, Բրամսը:

<sup>26</sup> Շառլ Բոդլեր (1821-1861)-ֆրանսիացի բանաստեղծ և գրաքննադատ: Նա եղել է ֆրանսիական սիմվոլիզմի ավետաբերներից:

<sup>27</sup> „Поэзия Армении”, с. 54. Տե՛ս նաև Հովհաննես Թլկուրանցի, Աշխատասիրությանը՝ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 45:

դարձությունները» („Фрик в своих стихах говорит обо всем том, что видел своими глазами, как непосредственный наблюдатель, о событиях своего века, своего времени, своих дней”).<sup>28</sup> Ինչպես Ֆրիկն է սպառիչ տողերով նկարագրել թաթարական ծանր լուծը Հայաստանում, այնպես էլ Վ.Բրյուսովը դիտարկում է Ֆրիկի քերթվածների պատմական արժեքը: Բավական է հիշել նրա թարգմանած հետևյալ տողերը.

Теперь еще труднее нам, когда Татарин сел на трон,  
Всех обделил он и воров поставил господами он.<sup>29</sup>

Ինչպես կտեսնենք վերոբերյալ տողերը ճշգրիտ թարգմանությունն են «Ընդդեմ Ֆալափին և վասն բախտի» հետևյալ հատվածի.

Հիմիկ դրժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր,  
Ջրրկեց զամենայն աշխարհս ու զգողերն եղիր մեծաւոր:<sup>30</sup>

Ֆրիկի ծրագրային երկու բանաստեղծությունները և նրա զրկանքներով լի կյանքի պատմությունը հնարավորություն են տալիս ուսուցչին դարձյալ միջառարկայական կապ հաստատել հայ գրականության և հայ ժողովրդի պատմության միջև:

Հաջորդ ծրագրային հեղինակը Նահապետ Քուչակն է, որից ժողովածուում կան հիմնականում սիրո հայրեններ, մի քանի խրատականներ և «Կռունկ» երգը: Ինչպես պարզ է դառնում ժողովածուի առաջաբանից, Բրյուսովը քաջատեղյակ է Քուչակի անվան շուրջ եղած բանասիրական տարակարծություններին: Նա Քուչակին կապում է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի հետ, որի բարբառի ազդեցությունը որոշակի է քուչակյան հայրենների վրա: Սակայն որպես գրականության մեծ գիտակ, նա զգում է այդ հայրենների վրա գրողի, այսինքն՝ գրքի մարդու կնիքը, որովհետև դրանք մշակված ու կատարյալ ստեղծագործություններ են, և արդեն կարևոր էլ չէ, թե ով է եղել Նահապետ Քուչակը. կարևորն այն չքնադ բանաստեղծություններն են, որոնք հասել են նոր ժամանակներին: Նա դրանք համարում է հայ քնարերգության մարգարիտներ: Ահա թե ինչ է գրում Վ. Բրյուսովը. «Սակայն ով էլ որ լինի պատմական Նահապետ Քուչակը և ճշտորեն որ տարիներին էլ եղած լինի նրա կյանքը (բոլոր դեպքերում նա ապրել է միջնադարի վերջում), նրա բանաստեղծությունները մնում են հայ քնարերգության գեղեցկագույն մարգարիտներ» („Но кто бы ни был исторический Наапет Кучак и на какие бы годы, точно, ни падала его жизнь (во всяком случае, он жил в конце средневековья),- стихи его остаются прекраснейшими жемчужинами армянской поэзии”):<sup>31</sup>

Ն. Քուչակի բաժինը Վ. Բրյուսովը վերնագրել է „Песни любви и гномы” («Սիրո երգեր և խրատներ»): «Ռուս-հայերեն բառարանում» ակադեմիկոս Ա.Ղարիբջանը գնոմա բառը բացատրում է հետևյալ ձևով.

<sup>28</sup> „Поэзия Армении”, с. 49.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 184:

<sup>30</sup> Ֆրիկ, Տաղեր, Երևան, 1982, էջ 49:

<sup>31</sup> „Поэзия Армении”, с. 55.

Гнома – իգ. հաճախ հոգնակի, գրականագիտական, գնումա (խրատական ասացվածք, աֆորիզմ):<sup>32</sup>

Ն. Քուչակի գործերի շարքում Բրյուսովը դրել է նաև հանրահայտ «Կռունկը» իր թարգմանությամբ՝ որպես պանդխտի երգ: Սակայն նա նշել է, որ այդ երգը հավանաբար նրան չի պատկանում: Անշուշտ հայ պանդխտի այդ սրտառուչ երգը ռուս բանաստեղծը շատ է հավանել: Բանաստեղծության տողատակում ներկայացնում է երկու չթարգմանված բառերի բացատրությունը.

1) Крунк-журавль

2) Хариб-живущий на чужбине<sup>33</sup> (օտարության մեջ ապրող):

Բրյուսովյան թարգմանությունը շատ հարազատ է հայերեն բնագրին.

Крунк! Куда летишь? Крик твой – слов сильней!

Крунк! Из стран родных нет ли хоть вестей?...

Свой покинул сад я в родной стране,

Чуть вздохну, душа – вся горит в огне.<sup>34</sup>

Կռու՛նկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,

Կռու՛նկ, մեր աշխարհէն խաբրիկ չունի՞ս...

Թողեր եմ, էգեր եմ մլքերս ի յայգիս,

Քանի որ ա՛խ կու քաշեմ կու քակվի շնչիկս...<sup>35</sup>

Այս երգի ժողովրդական լինելն ապացուցում է միջնադարագետ Ասատուր Մնացականյանը, որը մատնացույց է անում, թե Ալիշանը այն 1852 թվականին տպագրել է անգլերենով՝ որպես ժողովրդական երգ (Տե՛ս Armenian popular songs translated into English by the R. Leo M. Alishan DD, Venice, 1852, p. 49-53).

Երգն այնքան տարածված է եղել հայ միջնադարյան ձեռագրերում, որ նրանից մի օրինակ այժմ գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանի գրադարանում: Ֆ. Կոնիբերը բերում է այդ երգի առաջին տունը՝ «Երգ դարիբի» վերնագրով, իսկ վերջում ավելացնում. „A Song of Exile. See Archag Tchobanian, Chants Populaires Armeniens, Paris, 1903, p. 187”:<sup>36</sup>

Վ.Բրյուսովը թարգմանել է հիմնականում Ն. Քուչակի սիրային հայրենները, խրատականից ժողովածուում ընդգրկել է միայն երկուսը: Նրանցից մեկն, իրոք, շատ խորհմաստ է և ապրող մարդուն հիշեցնում է կյանքի ունայնության մասին, քննում կյանքի և մահվան փոխհարաբերության խնդիրները.

Однажды по улице шел я домой.

Вдруг череп, смотрю, на дороге лежит.

<sup>32</sup> Ա. Ս. Ղարիբյան, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977, էջ 170:

<sup>33</sup> „Поэзия Армении”, с.

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 231:

<sup>35</sup> Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 260-261:

<sup>36</sup> F.Conybeare, A catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, p. 285.

Ударил ногой я по кости пустой,  
Вдруг череп в лицо мне улыбку кривит,  
И кость отвечает такие слова:  
„Эй, слушай, что делаешь ты удалец?  
Вчера лишь я был, как твоя голова,  
А нынче настиг меня горький конец!”<sup>37</sup>

Այս հայրենը ռուսերեն թարգմանել է Ս. Շերվինսկին՝ դարձյալ խիստ հարազատ մնալով հայերեն բնագրին:

Տեղին է մեջբերել սիրո հայրեններից մեկը Վ.Բրյուսովի թարգմանությամբ և հայերեն տարբերակով.

Тот поцелуй, что ты дала, был сладостен моим устам:  
Подобный плод, ах! Не растёт ни по каким земным лесам!  
Но был коварен этот плод, как оный, что вкусил Адам:  
Отец лишился Рая, ты-встречаться запретила нам!<sup>38</sup>

Զայնդ պագդ որ ի քո բերէն  
դու տըւիր քո սըրտի կամով,  
Հանցեղ անուշիկ պըտուղ՝  
ո՛չ ցամաք երկիր կէր՝ ւ ո՛չ ծով.  
Նըման էր ի այն պըտողոյն,  
որ Ադամ կերաւ խաբանօք,  
Կերաւ՝ ի դրախտէն ելաւ,  
ես՝ ի քո ծոցոյն կարօտով:<sup>39</sup>

Այս հայրենը ռուսերենով ու հայերենով աշակերտին ուսուցանելիս ուսուցիչը հնարավորություն է ստանում ևս մեկ միջառարկայական կապ ստեղծելու: Արդի հայ դպրոցներում անցնում են հայ եկեղեցու պատմությունը և տարրական գիտելիքներ են մատուցում քրիստոնեական կրոնի վերաբերյալ: Ներկայացվող հայրենը շատ պատշաճում է նման աղերսներ մատնացույց անելու:

Վերջին բանաստեղծը հայ միջնադարից, որ անցնում են ավագ դպրոցում, Սայաթ-Նովան է:

Աշակերտներին ուսուցիչը բացատրում է, թե որքան կարևոր են այն գնահատականները, որոնք Վալերի Բրյուսովը տվել է Սայաթ-Նովայի ստեղծագործությանը: Նա նույնիսկ բանաստեղծություն է նվիրել Հայաստանին: Այդ մասին գրականագետ Անուշավան Զաքարյանը գրում է. «Վալերի Բրյուսովը հայ ժողովրդի պատմությունն ու պոեզիան ուսումնասիրելիս գրել է

<sup>37</sup> „Поэзия Армении”, с. 230.

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 227:

<sup>39</sup> Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, 1988, էջ 112:



Հայաստանին նվիրված մի շարք ոգեշունչ բանաստեղծություններ: Ոգեկոչող խոսքերով դիմելով հայ ժողովրդին՝ նա հավատով լեցուն գրում է, որ հայերին հատուկ է անկոտրում ոգի, պայքարի կամք և անսպառ կենսունակություն: Առաջին իսկ՝ «Հայաստանին» (1915) ստեղծագործության մեջ Վ.Բրյուսովը խոստովանում է, որ Հայաստանը մի երկիր է, որտեղ «շիրիմ» է որոնել, բայց՝

...Լոկ աշխարհ գտա միշտ ստեղծարար,  
Զնգացին բացվող օրվա պես պայծառ  
Հին-հին օրերի սրինգները վես,  
Եվ մահվան դաշտը դարձավ ծաղկավառ:<sup>40</sup>

Վ.Բրյուսովի Սայաթ-Նովային և հայ միջնադարյան քնարերգությանը տված գնահատականները խորապես հուզել են Հովհաննես Թումանյանին: Վ.Բրյուսովը հայ բանաստեղծին համարել է մարգարե, որը **«իր հանճարի ուժով ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման»**:<sup>41</sup>

Նշանավոր սայաթնովագետ Մորուս Հասրաթյանը ևս իր գնահատականներում մեծ սիրով օգտագործում է Վ.Բրյուսովի՝ Սայաթ-Նովայի խաղերին տված բնութագրականները: Նա գրում է. «Յակով Պոլոնսկուց վաթսունվեց տարի հետո ռուս ականավոր պոետ և գրականագետ-բանասեր Վալերի Բրյուսովը «Հայկական պոեզիայի անթոլոգիան» պատրաստելիս, թարգմանելով Սայաթ-Նովայի երգերից մի քանիսը, նրան դասում է **«առաջնակարգ այն պոետների շարքին, որոնք իրենց հանճարի գործությամբ դադարում են մեկ ժողովրդի սեփականությունը լինելուց և դառնում են ողջ մարդկության սիրելին»**: Վ.Բրյուսովը Սայաթ-Նովային համարում է **«երկնային այն հազվագյուտ պարզներից... որոնք օրհնանք են թողնում իրենց դարին ու իրենց ժողովրդին»**:<sup>42</sup>

---

<sup>40</sup> Ա. Զաքարյան, Հայոց Մեծ եղեռնի արտացոլումը ռուս գրական գործիչների ստեղծագործություններում (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», թիվ 3, Երևան, 2015, էջ 11):

<sup>41</sup> Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 98:

<sup>42</sup> Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթացրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ XL:

ՀԱՎԵԼՎԱԾ

ВАЛЕРИЮ БРЮСОВУ

Был холоден, искусен, многознающ,  
Чтил Клио, пронизал столетий тьму,  
И с нами был ты, был нам как товарищ,  
Когда жила беда у нас в дому.

Был в этом доме сумрак скорбно-давящ,  
Стезя народа таяла в дыму,  
Наш древний гений, выросший средь пожарищ,  
Он был ещё неведом никому.

Нырнул ты в наше море, в мир бездонный,  
И, оглядевшись, выплыл, потрясённый,  
Как блеском ослеплённый водолаз...

И в мире страшном, в жизни злой и утлой,  
Сокровищницу нашу распахнул ты,  
И стал нетленным именем для нас.

1934. 17. X, Ереван

*Перевод М. Синельникова*

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

Մառն ու հմուտ էիր, խոր ու գիտուն,  
Պատմությունն էր անհուն քո Մուսագետը,-  
Եվ դու եղար մեզ հետ, երբ ահավոր աղետը  
Մոլեգնությամբ իր բիրտ՝ մտավ մեր տուն:-

Այն օրերում մեր տանը չկար խնդում,  
Կորնչում էր միգում մեր արահետը,-  
Եվ մեր հանճարը հին, կոփված անդուլ  
Մերունդների ջանքով – դեռ անձանոթ մի գետ էր:

Դու սուզվեցի՛ր, վարպետ, անեզրական այդ ծովը,  
Եվ շլացած անձիր մեր գանձերի փայլից –  
Ելար, ինչպես նավագ, որ գյուտերից գինով է...

Եվ աշխարհի առջև, որ դեռ ահո՛վ էր լի,  
Դու բացեցիր ոգու մեր գանձարանն անհուն –  
Եվ մեզ համար դարձար – անմարելի անուն...

1934. 17. X. Երևան

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՆԱՍՏԱԿՆԵՐԸ՝  
ՈՒՂՂՎԱԾ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

1) ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

1916, մարտ 16, Փարիզ

Իմ սիրելի և մեծանուն գրչեղբայր,

Այն ջերմ հեռագիրը, որ բարի էք եղած դրկելու Մոսկվայի գրական և գեղարվեստական շրջանակներու անունով, հանձնեցի Սորպոնի հանդեսը կազմակերպող հանձնաժողովին:

Հեռագիրը կարդացվեցավ և ջերմորեն ծափահարվեցավ: Այն մեծ հաճույք պատճառեց մեր ֆրանսացի բարեկամներուն, ինչպես նաև իմ ազգակիցներուն:

Խումբ մը ականավոր ֆրանսացիներ, դաշնակիցներու դատին հավատարիմ մնալու պատճառով տառապած հայ ժողովրդին հանդեպ համակրանքի հանդիսավոր ցույց ընելու համար, որոշեր են Փարիզի բարձր դասի կանանց հանձնախումբի օժանդակությամբ, ապրիլի 9-ին կազմակերպել մեծ ցերեկույց մը Սորպոնի ամփիթատրին մեջ:

Պիտի նախագահե և զեկուցե Ֆրանսայի երեսփոխանական ժողովի նախագահ Պոլ Տեշանելը, խոսք կառնեն հանրային կրթության նախարար պարոն Պենլըվեն, ինչպես նաև պարոն Անաթոլ Ֆրանսը և պարոն Պոլ Ատամը: Քոմեդի Ֆրանսեզի դերասանները պիտի արտասանեն հայերեն բանաստեղծություններու թարգմանություններ, իսկ հայ մենակատարներ և հայ երաժշտական դպրոցի երգչախումբը Վենսան դ'Էնդիի ղեկավարությամբ պիտի կատարե հայկական երգեր:

Ասիկա ազնիվ նախաձեռնություն մըն է ֆրանսական մտավորականության ընտրանիին կողմե, որ ներշնչված է այն նույն զգացումով, որով Դուք և Ձեր աշխատակիցները կառաջնորդվիք:

Քաղաքակիրթ աշխարհը սկսած է հասկնալ, թե մարտիրոսացած ժողովուրդի մը մեջ կան մշակութային գանձեր, իմացական ուժ, մարդկային արժեք և թե՛ բավական չէ միայն խղճալ անոր վրա, այլև կա քաղաքակրթական տեսակետից անոր ճանչնալու և մեծարելու պարտավորությունը:

Ձեզ տեղյակ կպահեմ այս նախաձեռնության, որ անշուշտ Ձեզ հաճույք պիտի պատճառեք, թերևս ալ Ձեզ և Ձեր գործակիցներուն առաջնորդեր այս առթիվ գրավիչ մտածումին, նախագահ Պոլ Տեշանելին հեռագրելու Ձեր ալ խոսքը:

Ձեզ կնվիրեմ բանաստեղծություններու իմ երկու հավաքածուները և կիսնդրեմ, իմ սիրելի և մեծանուն գրչեղբայր, որ բարեհաճեիք ընդունիլ ատոնք որպես գրավական իմ երախտիքին, և հավաստիացումն իմ տաճած ջերմագին զգացումներուն ու նվիրումին:

Ա.Չոպանյան

2) ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

1916, ապրիլ 24, Փարիզ

Սիրելի գրչակից եղբայր,

Թիֆլիսի հայկական թերթերեն մեծ հաճույքով իմացա, որ քանի մը ռուս նշանավոր բանաստեղծներու և գրողներու հետ ձեռնարկեր եք հայ գրականության և բանաստեղծության լավագույն էջերը Ձեր մեծ երկրին ծանոթացնելու գործին, ինչպես նաև իսկական հուզումով հետևեցա զեկուցումներ կարդալու համար Կովկասի մեջ կատարած Ձեր շրջագայությանը, երբ այդ ժամանակ Դուք հայտնաբերեր, վերլուծեր և փառավորեր եք այնքան քիչ ծանոթ ու գնահատված Հայաստանի բանաստեղծական ոգին:

Ասիկա անհուն ծառայություն մըն է, գոր Դուք մատուցեր եք մեր դատին և ազնիվ սփռփանք մը, որ մեզ շնորհեր եք այն խոր վշտի մեջ, որտեղ մեզ խորասուզեր էր մեր ժողովրդին հարվածող ահավոր աղետը:

Հավատացեք, սիրելի գրչեղբայր, Ձեզ և Ձեր աշխատակիցներուն հանդեպ իմ տաճած ամենաջերմ երախտիքին:

Կհայտնեմ նաև Ձեզ և Ձեր գրական ու գեղարվեստական շրջանակներուն փարիզահայերու և իմ շնորհակալությունը: Հաճեցեք ընդունիլ սիրելի գրչեղբայր, իմ ամենաջերմ զգացումներուն և նվիրումին հավաստիքը:

*Ա. Չոպանյան*

Միրելի գրչեղբայր,

Ազատության մուտքը Ռուսաստան զիս համակեց ուրախությամբ: Ասիկա պատմության ամենեն մեծ և ամենաերջանիկ իրողությունն է ֆրանսական հեղափոխութենեն ի վեր:

Փառք ռուս ազնիվ ժողովուրդին, որ մարդկության տարեգրության մեջ արձանագրեց այդ փառապանծ էջը:

Մենք բոլորս, գաղափարի մարդիկ, որ հաստատապես հավատացեր ենք ամբողջ աշխարհի մեջ ճշմարտության և ազատության հաղթանակին, չենք սխալվեր նույնիսկ այս հրեշավոր սարսափի օրերուն: Ռուս մեծ ազգն է որ կուտա առաջին և շքեղ ապացույցը:

Դժբախտության վիհին մեջ տառապող հայ ժողովուրդը ի տես այս մեծ և ուրախառիթ եղելության, որ վերջնականապես լույս կսփռե ապագային վրա, կտեսնե արդարության համար իր տաճած հույսի վաղորդայնը:

Հակամարդկային ոճիրները պիտի պատժվին: Խաչված անմեղությունն իր հատուցումը պիտի ունենա և մարդկային ազնվության համապատասխան կյանք մքը պիտի տիրե աշխարհի վրա:

Կեցցե՛ Ռուսաստանը:

Հաճեցեք ընդունիլ, իմ սիրելի գրչակից եղբայր, շնորհավորանքը Հայաստանի մեկ քանաստեղծին, հին ու վշտակիր Հայաստանի, որուն ոգին այնքան խորապես ընկալել էք Դուք և այնքան ջերմորեն փառավորել՝ անոր հանճարը:

*Ա. Չոպանյան*

ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՆՅՈՒԹ „THE NEW YORK TIMES”-ԻՑ

**The New York Times о достоверности  
„Истории Армении” Мовсеса Хоренаци**

Новейшие генетические исследования доказали абсолютную подлинность истории происхождения армянского народа, изложенную в 5-м веке крупнейшим армянским историком средневековья Мовсесом Хоренаци, сообщает Нью-Йорк Таймс.

Крупнейшая американская газета рассказывает о научном исследовании, в ходе которого генетики просканировали гены 173 армян в Армении и Ливане и сравнили их с генотипами 78 других народов. Выяснилось, что армяне – древнейший народ, потомки которого сегодня живут в Сардинии, Центральной Азии и в ряде других регионов.

Исследователи восстановили хронологию смешения армянских генов с другими генотипами народов населявших землю 3000-2000 лет до н.э: в конце бронзового века, когда смешение народов было еще в процессе, состоялось переселение народов, связанное с торговлей, войнами и демографическим ростом. После 1200 года до н.э., бронзовые цивилизации Средиземноморья пришли в упадок, что стало причиной изолирования армянского народа.

Генетические исследования свидетельствуют, что после этого ощутимого смешения армян с другими народами не происходило, что доказывает точность „Истории Армении” Мовсеса Хоренаци, который в своем средневековом труде указал 2492 год до н. э. датой возникновения армянского народа.

Одним из интересных фактов выявленных исследователями стало также то, что армяне гораздо ближе к земледельцам неолита, которые 8 тысяч лет назад привнесли в Европу земледелие, чем нынешние жители Ближнего Востока.

Отметим, что результаты исследования опубликованы также в интернет-библиотеке bioRxiv.

Источник: [RUSARMINFO](#)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան -----	3
-----	
Предисловие -----	6
-----	
<b>Ա.Դոլուխանյան</b> ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ ԵՎ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ (Գրական աղերսներ) -----	9
-----	
<b>Լ.Հովսեփյան</b> ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ -----	27
-----	
<b>Պ.Սահակյան</b> Վ. ԲՐՅՈՒՍՈՎԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ -----	47
-----	
<b>Ռ.Դոլուխանյան</b> Վ.ԲՐՅՈՒՍՈՎԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ -----	67
-----	
<b>Գ.Մարդյան</b> Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ „ՍՕՅԻՅԱ ԱՐՄԵՆԻԻ” ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՄԵՋ -	89
-----	
<b>Հավելված</b>	
Егише Чаренц – Валерию Брюсову -----	112
-----	
Եղիշե Չարենց – Վալերի Բրյուսովին -----	113
-----	
Արշակ Չոպանյանի նամակները Վ.Բրյուսովին -----	114
-----	
Մովսես Խորենացուն նվիրված կարևոր նյութ „The New York Times”-ից -----	118
-----	

